

20067

20068

20069

891.99-192

2-93

780.

Омб. XII ~~1870~~

Омб. XII



780

780

780

780

XII



780 XII

Dr



20 03

391:99-192

70-93

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐ

ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Յաւելած «ԾԱՂԿԵՓՈՒՆՁ» Կրթարանի



ՀԱՅ ԿԱՄԱՌՈՐՆԵՐԻ ԵՐԴՈՒՄԸ

Ով որ քաջ է ինչ կապտէ,
Արդէն ժամանակ է թող գայ,
Մահ պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է թող գայ...

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաձեպարան

1915

10681 10681 18301

Հ. Ս. ԵՐ ԿԱՄԱՌՈՐՆԵՐԻ ԵՐԴՈՒՄԸ



ԱԻԵՏԻՐ ՀԱՅՐԵՆԵԱՆՑ

Տամ քեզի աւետիք, դերի հայրենիք,
 Եկել են քո ուրախ ժամանակներդ,
 Ոչ մի բան չմնաց թերի, հայրենիք,
 Գործում են խանդավառ քաջ զաւակներդ:
 Հայրենիք, բազում քեզ դռներ է բացէ,
 Կաղաւթիս արիւնոտ արցունքէ լացէ,
 Զոհերուդ արիւնը բողոք է դարձէ,
 Յոյս կայ որ նորոգւին աւերակներդ:
 Անխելք որդիներդ խելքի են եկել,
 Աղաչելու փոխան զէնք են վեր առել,
 Շատերն ազատութեան սիրով են մեռել,
 Արդ կը ոգևորւին նահատակներդ:

Ֆ.

ՀԱՅԳՈՒԿԻ ՎԵՐՋԻՆ ՈՒԽՏԸ

Թող չար օրհասը թափէ իմ գլխին,
 Ապագութ մահւան բոլոր սե չարիք,
 Բայց քո սուրբ անունը մինչև վերջին շունչ,
 Ես չեմ մոռանայ սիրուն հայրենիք:

Թող ինձ պատրաստէ անգութ թշնամին,
 Կախողան և սիւն, կամ մի այլ գործիք,
 Բայց մինչև չը գցեն շերիմ իմ մարմին,
 Քեզ չեմ մոռանայ սէր իմ հայրենիք:



(5970-55)
 16947-58

Թող կոյր ամբոխը անձրեւէ գլխիս,
Քար, հուր, շանթ, երկաթ և շատ չարիքներ,
Բայց մինչև իմ բերնից չելանէ հոգիս,
Քեզ չեմ մոռանալ անտէր Հայաստան:

Թող ինձ հալածեն Վասակի, Թոռներ,
Ասելով՝ տգէտ, յիմար և անբան.
Այդ ես կը տանեմ մինչ կեանքիս վախճան,
Բայց քեզ չեմ մոռանայ, երբէք Հայաստան:

Թող իմ դիակս, մանրած մաս առ մաս,
Տանեն սգալով դէպ մահու դարպաս,
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,
Գուցէ քեզ մոռնամ, մայր իմ Հայաստան:

Բայց ոչ, երկնքում լուսոյ որդոց հետ,
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ,
Պիտի միշտ գոչեմ կրկնեմ յաւիտեան.
«Սիրուն հայրենիք, սիրուն Հայաստան»:

ԵՍ ԿՈՒՁԵՄ ԿՈՒԻՆԷԼ

Հերիք է մայրիկ, դու ինձ փայփայես,
Հերիք է, մայրիկ, ինձ կրծքիդ սեղմես.
Ես կուզեմ ջարդել շղթան բռնութեան,
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Հասակս քսան տարուց անց կացաւ,
Սիրտս վրէժով լիքը լցեցաւ.
Ձեմ ուզում տեսնել եղբարքս թշուառ,
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Լացով չեմ կարող փրկել Հայաստան,
Մայրիկ, ինձ պէտք է ձի, սուր, հրացան,
Ձեռներս ծալած չեմ կարող նստել,
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Համիդն ունի գործեր մեզի հետ,
Մեզ կոտորում են մեզ թալանում են.
Հերիք է, մայր իմ, կարող եմ լուել,
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

ՍՐԻՔ ԵՂԲԱՐՔ ՄԻԱՆԱՆՔ

Եթէ կամիք փրկել թշուառ հայրենիք,
Նախ պիտի՝ կապենք մեր մէջ մի սիրտ ու հոգի,
Եթէ կամիք անցեալ փառքին տիրանալ,
Հարկաւոր չէ ատելութեամբ բաժանել:

Արիք եղբարք միանանք,
Բաւ համարենք մեր տանջանք,
Ի սէր ճշւած հայ ազգին,
Գործ դնենք մեր ճիգ ու ջանք:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին
Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,
Ուրիշների սուտ պարգևից շլացած,
Մեզ մատնեցին մինչև այժմ՝ գերութեան:

Արիք եղբարք և այլն:

Մենք Հնչակեան, եղբարք, դուք Դաշնակցական
Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական.
Արիք վճռենք, հոգով սրտով միանանք
Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:

Արիք եղբարք և այլն:

Մի նպատակ և մի վսեմ գաղափար
Մեզ կապասեն անհամբեր ու անդադար.
Ուխտենք, եղբարք, յայտնենք սրտի միութիւն,
Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:

Արիք եղբարք և այլն:

ՎԱՆԵՑԻՈՑ ԶՈՒՆԻԱԳԸ

Բաւ է, եղբարք, վիզը ձկել,
Ողորմելի երեխ,
Ժամանակը հասել է,
Հայ դրօշակին ծածանիլ:
Հայոց լերինք թող թնդան,
Հայոց բերանք թող գոռան,

Հայաստանի դաշտերում,
 Քաջ հայերու զիւ «ուռն»,
 Արիւն վոթէ թող հայը,
 Ազադակէ միշտ ուռն,
 Մեր թշնամին այսուհետ,
 Սրտի վախէն թող դողայ,
 Այսուհետեւ արտասուք
 Վախկոտները թող հեղուն,
 Հայքըս արդէն պատրաստ ենք
 Վոթել աղնիւ մեր արիւն:
 Ու չենք դադրիլ վոթելու
 Մեր հայ, աղնիւ արիւնը,
 Մինչև ազգը չի ստանայ
 Իրա ազատութիւնը:
 Այս ու վախը մենք մոռցանք,
 Այժմ գիտենք մենք ուռն,
 Հայք, զոչեցէ՛ք միշտ ուռն,
 Որ թշնամին մեր դողայ:
 Գամառ-Քաթիպա

Ա.ՀԱ. ՄԱՅՐԻԿ

Ահա մայրիկ՝ ես գնում եմ,
 Եւ զոհեցիւ, ար զոհեցիւ,
 Քաջ ընկերներով միասին՝
 Անգութ քրդին շարդելու:
 Երբոր մայր իմ, Աստուհ եկար,
 Ինձի որտեղ փնտռեցիր.
 Գերեզմանիս վրայ գալով,
 Ի՞նչ ասացիր ու լացիր:
 Գերեզմանիս հողի վերայ,
 Ի՞նչ անուշիկ հոտ կուգայ.
 Այսուհետեւ անուշ մայրիկ,
 Ինձմէն քեզ օգուտ չկայ:

Գերեզմանիս հողի վերայ,
 Ցանէ ծաղիկ, իմ մայրիկ,
 Ցանէ ծաղիկ, թափէ արցունք,
 Երիտասարդ եմ, մայրիկ:
 Գերեզմանիս քարի վերայ:
 Խոշոր տառով գրեցէք —
 «Այսուհետեւ հայ մանուկներ,
 Ազատութեան զոհեցէք»:

ԵԼԷՔ ԵԼԷՔ ՀԱՅԿԱՊՈԼԻՏ

Ազատութեան այն վառ սէրը,
 Թունդ որոտաց իմ սրտում,
 Իմ հայրենեաց սուրբ անունը,
 Ինձ պատերազմ է կանչում. տրայլալամ:
 Ելէք, ելէք, հայկազունք,
 Ելէք, Հայկայ զաւակունք,
 Ելէք, ելէք, հայ եղբայրներ,
 Անենք մեր սուր նիզակներ, տրայլալ.
 Ահա, եղբայրք, հայ եղբայրներ,
 Առէք զրահ, սուր, դէնքեր,
 Մահի դաշտում Շաւարշանայ,
 Մեղի հրաւէր կը կարդայ, տրայլալամ:
 Ելէք, ելէք, հայկազունք,
 Ելէք Հայկայ զաւակունք, և այլն:
 Այս, հայրենիք, սուրբ անունդ
 Անշէջ վառի մեր սրտում,
 Մեր հայ եղբայրք շիրիմները,
 Իրանց գիրկն են մեզ կանչում, տրայլալ.
 Ելէք, ելէք, հայկազունք,
 Ելէք, Հայկայ զաւակունք և այլն:
 Այս օրերը մեր քաջ կեանքին,
 Նւիրական թող լինի,

Ո՛վ սիրում է ազատութիւն,
Թող չմոռնայ հայ անուն. տրայլալալամ.

Ելէք, ելէք, հայկազունք,
Ելէք, Հայկայ զաւակունք,
Ելէք, ելէք, հայ եղբայրներ,
Առնենք մեր սուր նիզակներ, տրայլալ.

ԿՌԻԼ ՑԷՔ ՏՂԵՐՔ

Կուեցէք տղերք, կուեցէք քաջ-քաջ,
Անվեհներ կանգնած թշնամու առաջ,
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոսոխի ահը.

Այս անգամն էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Ահա թշնամին փախչի սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախւած,
Կրակ տեղացէք, անգատար կրակ,
Փառք մեր զէնքերին, առատ է զնդակ.

Այս անգամն էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Մենք տօնախմբենք մեր նախնի քաջեր,
Մեզի կ'սպասեն մեր սէզ եղբայրներ,
Ազատ չենք ծնւած, գէթ մեռնինք ազատ,
Եւ մեր սիրտ հոգին պահենք անարատ.
Դէ կուէք տղերք մինչև շունչ վերջին,
Արժանի լինինք փառաց պսակին:

—Մեռնինք յուսալով մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ, կեցցէ Հայաստան,
Այսպէս յորդորեց և ընկաւ արին,
Թողնելով մեզնում յիշատակ բարի.
Ահեղ կուի մէջ անմահն հերոս,
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս:



ԻՏԱԼԱՑԻ ԱՂԶԿԱՅ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք թշուա, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդէ կանչում է,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ:

«Մեր հայրենիք շղթաներով
Լէյսքան տարի կապկապւած.
Իւր քաջ որդուց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատւած:

«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուներով լւացի:

«Նայիր նորան երեք գոյնով,
Նւիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանւի Աւստրիան:

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում,
Կարէ օգնել իւր եղբորը,
Զանց չարեցի քս սիրուն:

«Ահա իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք—
Պատերազմի վառ հանդէս:

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի,
Ազատութեան կը զոհւի:

«Գնա եղբայր, Աստուծ քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր.
Գնա թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

Գնան, մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին,
Քո թիկունքը, թող նա չասէ,
Թէ վատ է իտալացին».

Ասաց, տւեց օրիորդը,
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ,
Եղբայրն առաւ և ողջունեց.
Իւր սիրական քնքոյշ քոյր,
Սռաւ ղէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր:

— Քոյրիկ, կանչեց քաջ պատանին,
Մնաս բարեմաւ սիրական,
Այս դրօշակին պիտի նայի,
Ամբողջ բանակ իտալիան:
Ասաց, վազեց ղէպի հանդէս,
Աւտորիացոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէրժ,
Ազատութիւն իտալիան:

Ո՛հ իմ սիրտը կտրատուում է
Տեսնելով այսպէս սէրը,
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:

Ո՛հ արտասուքս ինձ խեղդում են,
Էլ չեմ կարող բան խօսել,
Չէ. չէ իտալիան,

կանայք այսպէս են.

Մ. Նալբանդեան

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ

Ձեր ճամբին մատաղ, կտրիճ եղբայրներ,
Երգ ու ժպիտով բռնած ձեր ուղին

Պիտի հաւատար, որ պայծառ օրեր
Խինդ ու աւետիք բերի մեր ցեղին:

Դարեր յուսախաբ մեր դժբաղդ ցեղին,
Էլ ո՞վ պիտ մեկնէր ձեռքը փրկութեան,
Էլ ո՞վ պիտ կանգնէր պաշտպան անմեղին,
Եթէ չունենար որդիք ձեզ նման:

Վարդան, սթափւի՛ր դարերի քնից,
Տես փառքիդ արժան քո հայ զաւակին,
Որքան էլ ցաւեր անցնին մեր գլխից,
Հաւատա՛, հայր քո հայն է կրկին:

Ապօն քաջարի, իմ հայ եղբայրներ,
Ձեր հայ քոյրերի կեանքը ձեզ մատաղ,
Առաջ միշտ առաջ կոխ ու աւեր, զմ նոյնի՛
Արեան ղէմ արիւն, ապա կեանք խաղաղ...

Արմ. Տիգրանեան

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պզտի տղայ, չեմ օրօրիլ օրօրանքդ, որ քուն լաս,
Հայ աղբարքդ ոտքի ելան, մենակ դժու ետ պիտ մնաս.
Ջարթէ, հոգիս անուշ քունէդ, թող աչքերդ լոյս տեսնին,
Արեւմուտքէն արեւ ծագեց, բաղդը բանեց հայ ազգին:

Ջար սուլթանի ոսկի թախտը ջարդեցաւ, վար ինկաւ.
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ.
Ո՛վ որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը դռնէ,
Սիրուն որդիս միթէ՞ մենակ, չար լուծին տակ պիտ մտնէ:
Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողազին ուղացինք
Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտքը լացինք,
Բայց նա չանսաց՝ պաղատանքին ողորմելի հայերուն,
Այժմ, նայինք, նա կը լսէ շառաչիւնը սուրերուն:

Տուր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուսները արձակեմ,
Ու այդ թուրիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դնեմ,
Ըստրուկ գնան արեան դաշտը, վերադարձիր ազատած:
Արդեօք մի օր պիտի լսե՞ս մեր խնդիրքը, ո՞վ Աստուծո՛ւ
Գաժառ-Քաթիպա

ՀՐԱՒԷՐ ԱԶՍՏՈՒԹԵԱՆ

Ի Զէն հայեր, ի սուր և ի հրացան
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն.

Լեռից լեռ թնդում է անեղ հրաման.

«Թռէք հայեր, թռէք՝ դէպի Հայաստան»...

Արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս,

Դրոտաց ու թնդաց քաղցր աւետիս,

Հայկայ քաջ զաւակաց առոյգ կուրծքերից

Ազատութիւն հնչեց ամեն կողմերից:

Սումը-խումը հայեր դէպի Տաճկա-Հայաստան
Փրկութեան աւետիս առած իւր բերան,

Դիմում են ցնծութեամբ իբրև հարսանիք,

Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,

Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,

Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը.

Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում

Անթիւ աւար և զանձ հայերին թողնում.

«Յաղթութիւն, յաթութիւն», գոչենք միաձայն

«Թշնամին կորած է կեցցէ՛ Հայաստան»...

ԶԻՆԻԱԾ ՊԱՏՐԱՍՏԻԱԾ

Զինւած պատրաստւած Զէյթունի քաջեր,

Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.

Վրէժով լցւած առիւծի նման

Քաջ-քաջ կուռն են թուրքի դէմ դաժան:

Կեցցէք դուք միշտ զէյթունցիք,

Որ պիտ' փրկէք հայրենիք

Դուք Հայաստանի պարծանք,

Մեր կեանքիցն էլ ձեզ կտանք:

Մանուկն օրօրոցում հանգիստ չէ ըպաւկած
Խնդրում էր մօրից. «բազուկներս բաց»...

«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,

Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...

Կեցցէք դուք միշտ զէյթունցիք,

Որ պիտ' փրկէք հայրենիք

Դուք Հայաստանի պարծանք,

Մեր կեանքիցն էլ ձեզ կտանք:

Ի՞նչ ես կաշկանդել, քանդիւր ինձ մայրիկ,
Ես կուզեմ կուել թուրքի դէմ ճարպիկ,

Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն,

Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն:

Կեցցէք դուք միշտ զէյթունցիք,

Որ պիտ փրկէք հայրենիք, և այլն:

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Կովկասի քաջեր խմբեր կազմեցէք,

Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք,

Առած իր շուրջը զինուորներ ուխտուն,

Մաքրէ ճանապարհ հա դէպի Սասուն,

Սուլթան սարսափած, ճարը կտրւած,

Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ շուտով շարժեցէք,

Երբէք միք վախնայ, սուրբ շարժեցէք,

Հասել է ժամը սուրբ ազատութեան,

Կենալու ժամը չէ շուտով քայլեցէք.

Սիրենք միութիւն չանենք վատութիւն,

Ունենանք հայեր, սուրբ ազատութիւն:

Օտար հողի մէջ չը մնանք հայերս,

Հերիք է հային այս պանդխտութիւն,

Թող չը ծաղրէ մեզ անգութ թշնամին,

Մինչև մենք հասնինք մեր նպատակին:

Սիրենք միութիւն, և այլն:

Քաջ Անդրանիկը անվախ սուր առած,
 Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,
 Այլ ու ձախ ջարդել տաճկաց զինուորին,
 Քիւրդերից մատաղ բերել վանքերին
 Դէհ, Շաքիր փաշա մտածիր հնար,
 Հազար ոսկիով անես զլիւիդ ճար:
 Կովկասի քաջեր, առիւծի ճուտեր,
 Որէք ձեր սուսեր, առէք նիզակներ,
 Հայ օրիորդներ, պնձեալ տիկիներ,
 Ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ,
 Հարուստք ձեր ոսկին տւէք մեր ազգին,
 Ձեր անգին անունն յիշեն սերունդներ:
 Դէ հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
 Բաց թողէք սանձեր, անցէք սար ձորեր,
 Ոհն կուի դաշտն, թշնամին անհաշտ,
 Մեր սուրը թող ուտէ օսմանեան վաշտեր
 Ասաւ քաջ Մուրադ, առած եմ խրատ,
 Կամ կուել զգատ, կամ մահ անարատ:

ԽՐԱ ԽՈՅՍ

Հերիք որդեակք, այսքան տարւայ տառապանք,
 Հերիք անգութ դաժան քրդին ոտքն ինկանք,
 Քանի խոնարհ գլուխ տւինք գայլերին,
 Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին:
 Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ,
 Հին քաջերի արիւնից ենք և ազատ,
 Թէ և չունինք ոչ սուր, ոչ թուր, ոչ նիզակ,
 Մեր բահերն էլ կանեն նրանց շանսատակ:
 Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,
 Նրանք մարդ չեն այլ լեռնական վայրենի,
 Մերն է ձիւքը, մերն է ուսումն ու հանձար,
 Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար:
 Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք և այլն:

Նրանց են մեր կոյս աղջիկներ, հարսունքը,
 Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը,
 Նրանց սուրի ծայրն է կարծես մեր հոգին,
 Նրանց գամբուր մեզնից շատ է թանկագին:
 Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, և այլն:
 Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
 Նոքա մեր վրայ լռիկ արցունք են թափում,
 Ձեն խնայիլ թե ու թիկունք, կը հասնին,
 Շուտով կուգան կը միանան Սուրբ գործին:
 Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, և այլն:

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք լեռներն ելնենք,
 Արօր գութան մոռնանք, հրացանն առնենք,
 Խեղդւած մեր բողոքը յայտնենք զէնքերով,
 Եւ մեր արդար դատը վարենք արիւնով:
 Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
 Ծնւած հայի որդիք հարազատ:
 Քան թէ ամեն վայրկեան կենդանի մեռնել,
 Ազատութիւն վճռել և ազատ մեռնել,
 Հինգ դարով մեռեալ ստորուկ հայ ազգը,
 Այսպէս պիտ' լուծէ եղբարց վրէժը:
 Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
 Ծնւած հայի որդիք հարազատ:
 Ստրկութեան շղթան պարզ շառաչում է,
 Ազատութեան ճնշւած ձայնն հառաչում է,
 Ազատ լեռներն լինին թող մեզ ապաստան,
 Եւ ընդարձակ հողերը հայոց գերեզման:
 Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
 Ծնւած հայի որդիք հարազատ:
 Յրւած խմբեր հասնեն Ձէյթունից ի Վան,
 Շտապենք միանանք, կազմենք խումբ հայկեան:

Հայի ազատութեան պարզենք վառ դրօշակը,
Կեանքը մահով կապւած զենքը նոր պսակ:
Մեր կեանք, մեր մահը թող լինի ազատ,
Ծնւած հայի որդիք հարազատ:

ՀԱՅՐԵՆԵԱՅ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

Հայրենաց սիրոյ համար,
Խմբեր պատրաստւած են քաջ,
Հրացանները ուսերին,
Փամփուշտները ձախ ու աջ:
Հնազանդ կարգով շարւած,
Իրանք առիւծի պէս քաջ,
Խմբապետը հրաման աւեց,

Գնալ զէպ յառանջ, յառաջ...

Ոսկեզօծ բաշտուղներով

Հազի շորեր թանկագին,

Գնում էին զէպի լաւուն,

Օգնելու Անդրանիկին:

Հայ քաջերը զիրք մտան,

Թշնամուն պաշարեցին,

«Ամեն կողմից կրակ տւէք,

Կոտորեցէք», գոռացին...

Եւ մահն եկաւ ջանփիղան,

Սարսափ տիրեց բանակին,

Փախչում էին զէպի լեռներ,

Վախկոտ զօրքերն ահագին:



220522



ԱՆԴՐԱՆԻԿ


ՀԱՅ ԿԱՄԱՌԱՌՆԵՐԻ ԸԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ԱՆԴՐԱՆԻԿԻ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք-գետին տենչափառ,
Սուրբ անունդ պիտի յիշի դարէ դար,
Հսկայ լեռինք քեզ ապաստան Անդրանիկ:
Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտի սողան իրենց բունը,
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Ձը ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանիկ,

Հայոց կուսանք, դափնեայ պսակ թող հիւսեն,
Քնքոյշ ձեռամբ քո ձախառը պսակեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
Կեցցէս յաւիտ զու անսասան Անդրանիկ:

597055



16947-58

Հայաստանի սոխակները քեզ համար,
Թող դայլայլեն գիշեր ցերեկ անդադար,
Անյաղթ ֆնաս դու քաջ կուր սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:

ԱԶՆԻԻ ԸՆԿԵՐ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Իմ թշնամիք ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով:
Հեռանում եմ, անգին ընկեր,
Զգնահատւած ոչ ոքից:
Բայց հաւատեալ աճնանւէր,
Ազգիս մշակ կ'հաշւիմ:

Ազնիւ ընկեր, չը մոռանաս.
Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք, —
Գնաս և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը հայոց ազգի
Կարեկցարար մտածիր,
Ոսկէ գրքոյին Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խղճով.
Այնտեղ Վարդանն, անմահ Վարդան,
Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք, — սեղան սրբութեան —
Ես Աստուծոյ առջև:
Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահա մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատագով:

Ս. Շահազէզ

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ,
Որ կուր դաշտում ընկաք անվհեր,
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք,
Բայց աւաղ ձեզ հետ մեռան ձեր իղձեր...
Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ:

Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք,
Սև հողն է այժմ ձեզ առել իւր գիրկ.
Ձեր արեամբ ներկւած սար ու դաշտերում
Անա խնդալից նոր կեանք է ետում.
Փթթել է՝ դարձեալ դարուն ծաղկաւէտ,
Բայց աւաղ, դուք էլ չէք փթթիլ յաւէտ...
Ցուրտ գերեզմանն է ձեզ առել իւր գիրկ,
Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք,

Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովին ձեր սուրբ ոսկորներ,
Ձեր վերջին կամքը՝ — «անէծքը թշնամուն» —
Մենք միշտ կը պաշտենք, որպէս սրբութիւն,
Անէծք ու վրէժ — դոքա մեր միակ
Կը լինեն կեանքի հզօր նպատակ...
Քնեցէք խաղաղ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովեն ձեր սուրբ ոսկորներ:

Ա. Մատուրեան

ՎԻՐԱՒՈՐ ԸՆԿԵՐՈՋՍ

Վիրաւոր ընկեր, բեր վերքդ կապեմ
Քնքոյ շղարշով, մօտ արի դու ինձ.
Թող լուռ անքոցդ, թող, որ ես լսեմ
Վիրաւոր ընկեր, պատմիր ինձ երկրից...

Ասում են այնտեղ ցուրտ ձիւների մէջ
Իմ եղբայրների արիւնն է հոսում,
Ասում են այնտեղ ցաւերն են անվերջ,
Վերաւոր ընկեր, բեր վէրքդ կապեմ:

Ես միշտ տեսնում եմ յուզուտ երազում
Կարմիր հորիզոն, կարմիր արիւններ,
Ու տենդերի մէջ ես էլ եմ ուզում:
Կուի դաշտ ելնել, անվախ աներեր:

Սուրբ հայրենիքիս կարօտը անհուն
Ծնշում է հոգիս ցաւով սրտակտուր,
Վէրքդ թող կապեմ, լուի ցաւ արիւն,
Վերաւոր ընկեր, բաց լեզուդ տխուր,
Պատմիր այնտեղից:

Ե. Շամախեան

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Դաշնակցական խումբ գնանք մենք Մասուն.
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,
Անդրանիկը քաջ իւր ընկերներով,
Կուզէ պատերազմ կ'սպասէ գարնան:

Մօտ է գարունը շուտով կը բացւի,
Հայի խօսքը քաջ, շուտով կը լսւի,
Հայերն ամբողջ ոտքի են կանգնած,
Հրացան ուսերին՝ «մերն է Նոր-տարին»...

Խմբապետները հոգով են կանգնած,
Ֆիտայի ուժով գնում են առաջ.

Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,
Դուռում է գոչում, կուզէ պատերազմ:

Յիշէք, եղբայրներ մենք շատ քնեցինք,
Բաւական է մեզ այսքան համբերենք,
Մայր-Հայաստանը ձեռքից հանեցինք,
Հիմա ոյժ ունինք դարձեալ յետ կռուներ:

ԱԶՆՏԵ ԱՍՏԻԱԾ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինւածքին,
Կենդանութիւն պարգեւի:
Ես անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով,
Ազատութիւնը գրկեցի:

Մինչ գիշերն անհանգիստ,
Օրօրոցում կապկապւած,
Հալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած:
Խնդրում էի նորանից,
Բազուկներս արձակել:

Ես այն օրից ուխտեցի,
Ազատութիւնը սիրել:
Թոթով լեզւիս մինչ կապեր,
Արձակեցան, բացեցան,
Միշ ծնողքս իմ ձայնից,
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասեցի,
Չէր հայր կամ մայր կամ այլ ինչ,
Ազատութիւն դուրս թուաւ,
Իմ մանկական բերանից:

Ազատութիւն ինձ կրկնեց,
Ճակատագիրն վերեցի,
Ազատութեան դու գինւոր,
Կամիս գրել այս օրից:

Ո՛հ փշոտ է ճանապարհն,
Քեզ շատ փորձանք կապաւէ,
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է:

Ազատութիւն գոչեցի,
Թող որոտայ իմ գլխին,
Կայծակ, փայլակ, հուր երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ կախաղան,
Մինչի մահու անարգ սիւնը,
Պիտի գոռամ, պիտի գոչեմ,
Անդատար ազատութիւնը,

Մ. Նալբանդեան

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ ՎԱՆԱՅ ԾՈՎԻ ՎՐԱՅ

Ուշ գիշերին ծովն է խաղաղ
Ջրեր վճիտ ու յստակ,
Ջինջ է երկինք միապաղաղ
Աստեղազարդ, կապուտակ:
Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ,
Սև ամպերով մոռայլեց,
Քամի բրդաւ, քամի անսանձ,
Եւ ծովակն այլայլեց:
Կուրծքն ուռած ու փրփրուն.
Ալիքներն ահաղին,
Սուգ ու հառաչ, գոռ ու գոչուն,
Թռան ծոցից ծովակին:

— Սիրուն ծովակ, ասա դու մեզ,
Էլ ինչ նորից յուզեցիր,
Այն ինչ փոթ էր, որ բերեց քեզ
Քամին մորար, անձանձիր:

Արդեօք ողբ էր թէ հառաչանք
Երգեց նա քո ականջին,
Կոյսի մրմռելջ, մօր հեծեծանք,
Թէ ճիշ անմեղ մանուկին:

Արիւնապատ մեր ձորերում
Հիւսեւ էր իր մեղեդին,

Թէ աւերակ մեր գիւղերում
Կազմել երգը ցաւագին,
Ա՛խ այդ ցաւոտ սև երգերով,
Մեզ քուն ասին մեր մայրեր,
Ու սարսափի զրոյցներով,
Խլացրին մեր ճիշեր:

Ու աջուհետ շատ տարիներ,
Նոյն երգերը տխրագին,
Սև դարձրին կարմիր օրեր,
Վախով լցրին մեր հոգին:

Մի անգամ էլ մեր լեռներում
Մի հողմ փչեց ահաւոր...
Էլ արտասուք նա չէր երգում
Ո՛չ ողբ ասում սգաւոր:

Սև լեռների մօայլ ծոցից
Խլած հսկայ գոչիւններ,
Սև ժայռերի գոչիւններից
Նա կազմել էր իր երգեր:

Պզտոր, կարմիր գետը յուզած,
Այնտեղ ունէր իր բաժին,
Մայր բնութիւնն էլ զարհուրած,
Միացել էր այդ երգին,

Երբ ժայռերը դուռն էին,
Հայը ինչպէս լուռ կենար:
Երբ լեռները դողում էին
Մեր սիրտն ինչպէս դիմանար:

Եւ խլեցինք մենք պատեանից
Սրեր վաղուց մոռացած,
Եւ դուրս ընկանք մենք տներից
Դէպ սուրբ վաթանն աւերած:

Լուռ կաց քամի, մի փշիր, լուռ,
Շատ յուզեցիր ծովակին,
Թող շշնջայ մեղմիկ զեփիւռ,
Թող հանգիստ թող ծովակին:

Լուռ կաց ծով, դարերի լալկան,
Է՛լ բաւ է այսքան հառաչներ:

Մենք ուժ ունինք սուր, հրացան,
Շուտ վերջ կանենք քո ցաւեր:

Թող միայն մեզ շուտով լողանք,
Թող որ հասնենք այն ափին,

Տես, լաւում են ճիշ, հառաչանք

Աղերս ու ողբ անմեղին...

Դէհ, ընկերներ, զարնենք թիեր
Հօր բազկով միասին.

Մօտ է ափը, հէյ կղբայրներ

Ահա հասանք ձեր հաւարին:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԿՌԻՆԵՆՔ

Մենք պէտք է կուենք և ոչ լաց լինենք,

Ազգի կորուստը գէնքով յետ խլենք.

Այսքան դար լացինք, ով էր լսողը,

Մեզ ինչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլևս չըլանք և ոչ լաց լինենք,

Կրակած սրտով մեր գործը վարենք,

Անվեհեր քաջին այս է պատկանում,

Միշտ ազատ մեռնել կուի լայն դաշտում:

Մոլի և երկչոտ տաճիկը թող լայ,

Երբ հայ քաջի դէմ կուի դուրս կը գայ.

Մենք վախեցող չենք մահից տանջանքից,

Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից:

Անէծք այն հօրն չի մղում որդուն,

Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.

Ամօթ այն հային և բիւր նախատինք,

Որ ազգի սիրուն չի գործում բարիք:



ՄՇԵՑՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ

Վիզներս ճկած՝ սրտով խոնարհենք.

Տիրասէր հպատակ լինինք ու ծառայ,

Նորա անունը աղօթքով յիշենք

Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքենայ:

Քրտինք—վաստակի մեր տառանորդը,

Տանք նորա զօրքին, որ նա կշտանայ,

Ըլլանք սուլթանի մտերիմ ճօրտը,

Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Թող նա մեր որդոց անմեղ արիւնով

Հաճոյքի համար սուրը լանայ,

Սրտերուս կսկիծը զսպենք խնամքով,

Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Թող պարկեշտասուն մեր աղջիկներով

Սուլթանի տափոտ պասքը յագենայ,

Մեր ոսկին սէրայ տանինք փէշերով.

Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Ցուցնունք որ Հայը չէ տաճկին ոտիս,

Այլ բարեացակամ սերտ ընկեր է նա.

Նորա գովողն է և ոչ չարխօսող,

Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

—Լուռ կնոց խեղճ Հայ մարդ, մնտի յոյսեր,

Քեզ շատ խաբեցին, էլ մի հաւատալ.

Կանցնեն ու կերթան շատ ու շատ դարեր,

Հայ ազգիս վերայ թուրքը չի խղճալ:

Ինչո՞ւ կը մոռնաս Փրկչի ստածը.

«Դուռը չբախած՝ ոչ որ չի բանալ»,

«Ո՞վ ստացել է իւր չի հայցած»,—

Հայ ազգի վերայ թուրքը չի խղճալ:

Ազատ ըլլալ կուգես, գիտեմ փափազդ,

Բայց դու մի յուսալ հասնիլ այդ օրին.

Ո՞ւր է, դու գիտե՞ս, բաղդդ ու փառքդ

Ու ազատ կեանքդ:—Ի ծայր քո սուրին:

ՃԱՐՏԱՐ ՅԱՆՈՒՆ ՍԵՐՈՒՔ ՓԱՇԻՆ

Չոկեցի անհատ քաջերը,
Անցայ ընդարձակ դաշտերը
Հասայ ճնապատ լեռները,
Հողիս, քեզ տեսնելու եկայ:
Սուքայ սարից մինչև Ղաթաւի,
Հողիս մէջս չէր դադարի,
Դիպայ անթիւ սարի քարի,
Ազատ գիրկդ ընկնելու եկայ:
Վանայ ծովէն մինչև Տարօն,
Նէմութից կը հսկես Սասուն,
Մէկդին Յակովբ, մէկդին Սօսօն,
Կարօտս առնելու եկայ:
Դու մեր կեանքը, դու մեր բերկրանք,
Սուրբ արիւնդ է ազգի փրկանք,
Դաշնակցութեան փառք ու պարծանք,
Երկու համբոյր տալու եկայ:
Դրօշակի Ողբիւր—Սերոր,
Սիրած գործիդ զօհն է Յակօր,
Դաշնակցութեան դէնքերն ամփոփ,
Միայն քեզ յանձնելու եկայ:
Պետրօգրադից մինչև Շիրակ,
Ծանօթներ քաշում են փափագ,
Յայտնի մարդկերանցից նամակ,
Յատկապէս քեզ տալու եկայ:

Փահրատ

Ք Ա Յ Լ Ե Ն Ք

Յուսահատուել մեղք է ընկեր,
Արիացիր, ոգի առ,—
Նայիր, փայլեց հեռում լապտեր,
Մենք էլ կառնենք շուտ գաղար:

Արիացիր, սիրտ առ, ընկեր,
Շարունակենք մեր ուղին,
Լսիր կարծեմ՝ թէ զանգակները,
Ղօղանջեցին սարերէն...
Ահա բացւեց աղօթարան,
Վստահ ընկեր, առաջ քայլենք,
Զինուոր ենք մենք ազատութեան,
Եւ անփորձ տեղ կը հասնենք...

ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՈՅՆ

Ո՛չ փող դարկինք, ո՛չ արծազանք լեռնասոյգ
Սարէ ի սար չարաշուկ տարին լուր,
Ու չեղեցինք ողբոց երգերը սրտայոյգ,
Երբ պատանւոյն բացինք մօռյլ փոսին դուռ:
Գիշերական մօռնջ ստուերներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով զօղ փորեցինք,
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր զգալու բլուր և երկին:
Պէտք չէր դադար և ո՛չ ճերմակ պատանքներ,
Որով գոցէր ազատորդին քաջ որդին,
Նա յետ մարտին կարծես յոգնած կու հանգչէր
Ու վերարկուն կարմիր բաւ էր իւր անձին:
Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցից
Մեր քաջ Տէրտէրն, զինուոր Հայոց ու Աստուծոյ,
Գովեց զմահն և զքաջութիւնն իւր օրհնեց,
Թոյլ չի տաւ հառաջ մ' ու ճիշ հանելոյ:
Բայց երբ գլուխն ի բարձ դրինք հողաշէն,
Տեսանք զգեղ ճակտին ու վերքն պայծառ.
Մէյ մալ քամի յանկարձ փչեց ցրտաշունչ,
Լուսին շողերն եկաւ գոցեց մթին ամպ,
Ու մեր սարերն դերթ ուրականք անմոռնչ
Մե զլուսինն անկած զիտեն ապշութեամբ:

Յայնժամ ցուրտ, ցուրտ հող լեցուցինք իւր վրան
 Սաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատէր ետ,
 Ո՛հ ալ շքեղ արձանագիր, ո՛չ տապան,
 Զինք մենակ թողուցինք իւր փառքին հետ:

ԱԼԱԳԵԱԶԻՆ

Սեւմութ ամպեր ճակտիդ դիզւան,
 Դուման հագար, Ալագեանդ,
 Սրտումս արեւ էլ չի ծաղկում,
 Սիրտս էլ դուման, Ալագեանդ:

Զառ փէշերդ անցայ, տեսայ,
 Առանց դարդի սիրտ չը կար:

Ա՛խ, իմ դարդըս ջան Ալագեանդ,
 Իմ դարդիս պէս հէշ չը կար...

—Է՛յ, Մանթաշի նըշխուն հաւքեր,
 Իմ դարդըս որ՝ ձերն եղնէր,

Զեր էդ գնո—վնո խաս-փեռուրներ,
 Կը սենային, քանց գիշեր:

—Է՛յ, Մանթաշի մարմանդ հովեր,
 Իմ դարդըս որ ձերն եղնէր,

Զեր ծաղկանուշ բուրմունքը նուշ
 Թոյն ու տօթի կը փոխէր:

Հէ՛յ վնխ... կոտրան իմ թեւերըս,
 Ընկայ գիրկդդ, Ալագեանդ:

Ա՛խ, մեծ սրբտիդ սըղմեմ սիրտըս,
 Լամ, արուն լամ, Ալագեանդ...

Աւ. Իսահակեան

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես գնում եմ հեռու երկիր,
 Իմ սիրելի թանկագին.

Բաժանում եմ ես քեզանից,
 Գուցէ կրկին չը դառնամ:

Վեր կաց, սիրուն, քո ձեռքովդ,
 Մէջքիս կապէ սուր, նիզակ,

Պատերազմի փողը հնչեցին,
 Պիտի մանեմ գէնքի տակ:

Մոտս բարձր իմ սիրելի,
 Իմ թանկագին բարեկամ,

Միշտ աղաչէ Աստածանից,
 Որ կենդանի լիտ դառնամ:

Հայրենիքի սիրտը համար,
 Աշուղ երգիչ եմ դառել:

Գերեզմանս մէկ բարի տակ,
 Դուք պիտ ծածկէք սեւ հողով:

ՆԻԷՐ ՀԱՅԴՈՒԿԻՆ

Անուշաբոյր, թարմ ծաղիկներս,
 Հայ օրիորդը ինձ ընծայեց,

Հեռու երկրից անկեղծ նւէր,
 Իր քոյրերուն ուղարկեց:

Ասաց, «Տնւր այդ փունջն ուր ասան,
 Թէ չի անցնիլ էլ երկար,

Կուի դաշտում հարս ու փեսայ,
 Ել հանդիպենք մենք իրար:

Կուի կուտանք, կուի արդար,
 Կուի վերջին ճգնական,

Գօտեպնդած, հերոսաբար
 Ու կազատենք Հայաստան:

Դուք ցայտեցին արցունքներ տաք,
 Իմ աչքերից այդ պահուն,

Լսում էի կարծես անյագ,
 Ազգութեան պատգամին:

Եւ երգեցի տանել փունջն այն,
 Դէպի կարմիր Հայաստան,

Ուր վիրաւոր հայերն համայն
 Սպասում են փրկութեան:

ԹԻԿՈՒՆՔԴ ԼԼՅՆ

Թիկունքդ լայն, թևերդ ուժգին,
Կուներդ ամուր պինդ պողպատ,
Սիրել գիտես, կուեւ չիտես,
Դու անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քիւրդերը,
Եղբորդ արիւնն են ծծում,
Դու անտարբեր, սառն արիւնով,
Հանգստութիւն ես փնտռում:

Ամօթ քեզի հազար ամօթ,
Որ գէնք չունիս քո ձեռքին,
Քո եղբորդ կուի Ղաշտում,
Տապալում է թշնամին:

Ձեռքդ տո՛ւր ինձ, երգւենք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի,
Գնանք, կուենք առիւծաբար,
Ի սէր ճնշած հայ ազգի:

ՄՇԵՑՈՒ ՄՕՐ ԱՂԱԶԱՆՔԸ

Թիփի բորան մուժ գիշերին
Կը պտտւէ ֆիդային,
Պատրօնդաշը խաչփակ թալած.
Ձեռքին առած հրացան:

Ա՛խ, ձեզ մատաղ, ջանֆիդայիք,
Ձեր մէր ձեզի թող մեռնի,
Մշու սուլթան սուրբ Կարապետ,
Ձեզի բեօմազ թող եղնի:

Ա՛խ, ֆիդայիք ձեր սաղաղէն,
Ձեր խեղ տարէք զիմ տղուն,
Ձեզ խեղ մեռնի ձեր խեղ ապրի.
Ազգին մատաղ զիմ տղէն:

Թող դէն թողնի խարօր ու մաճ
Իմ մէկ ու ճար ազիզ լաճ,
Քիչ մալ թող թւանքի խեղ խաղայ,
Էլ թող չը տայ քրդին խարճ:

Ճ Ա Մ Բ Ի Ն

Հայրենիքիս վառ երազով՝
Գիշերն ինձի քուն բերեց,
Եարար սփ էր անուշ ձէնով
Խորունկ քնէս ձէն տեց.
«Վեր ել, ճամբորդ, դարիպ ախպէր,
Բարի լուսը բացւեր է.
Երազիդ մէջ շատ ես լացեր,
Աչւըներդ թրջերէ»...

Արեն ելաւ ցոլցալով
Աղօթրանի պալատէն,
Սև թևերը թափ ծափ տալով՝
Հաւքեր կ'անցնին երկնքէն:
Դարիպ հաւքեր, դարդնոտ հաւքեր,
Եւ էլ դարդու ճամբորդ եմ.
Կեցիք, հաւքեր, մէկ տեղ երթանք,
Ես էլ ձեզ պէս դարիպ եմ...

Ա՛խ մեր գեղեր — տեղերն կերթամ, —
Էնոնց շատ եմ կարօտեցր.
Թոշնած սրտով՝ դարդու կ'երթամ, —
Գեօզալ եմ եմ կորուցր.
Գողտուկ լալով՝ սերտս էլման
Արտըսուքով լցւեր է. —
Ազիզ մօրս, ջանիս կերթամ, —
Աշխարհք ինձի մոռցեր է...

Դերենիկ Դեմիրճեան

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՉԸ

Ով որ քաջ է, ինչ կապասէ,
Արդէն ժամանակ է, թող գայ,
Մահ պատերազմի օրհան է,
Ով որ անվախ քաջ է թող գայ:

Թափենք գնդակ ինչպէս տարափ,
Թշնամին լինի յուսախաբ,
Տարածենք մահ—ահ ու սարսափ,
Ով որ տղամարդ է, թող գայ:
Մերթ Սառսեն, մերթ սարէ Սիփան,
Կռիւ կունենանք անխափան,
Մինչև որ փրկենք Հայաստան,
Այս յոյսն ունեցողը թող գայ:

Կամ կուինք պարպինք վերջանանք,
Կամ գէնքով փրկուիին ստանանք,
Բաւական է գերի մեռնք,
Ազնիւ մտածողը թող գայ:

Երկաթի մարդ քարի որդի,
Վրէժխնդիր լինի թուրքի,
Աշխուժով քարի տակ չօքի,
Անախալ խիտողը թող գայ:

Սուրը մէջքին, հրացանն ուսին,
Համարձակ դիմէ օրհասին,
Մահաւան պատանքը միախին,
Մահն արհամարողը թող գայ:

Հինգ դար է որ մեզ կապանեն,
Բռնի կրօնից կը հանեն,
Կին ու աղջիկներս կը տանեն,
Նամուս ունեցողը թող գայ:

Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով պէտք է մաքրել հաշիւ,
Յարգել գէնքը տալ մեծ պատիւ,
Անդրանիկին սիրողը թող գայ:

Յահրա



ԱՆԴՐԱՆԻԿԸ
ԵՒ ԻՐ ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐ

ԶԱՆ ԲԴ ՕՐԵՐԸ

Զախորդ օրերը ձմռայ նման կուզան ու կերթան,
Վհատելու չէ. վերջ կունենան կուզան ու կերթան
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
Որպէս յաջախորդ՝ շարէ շարան կուզան ու կերթան:

Փորձանք հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուզան ու կերթան:
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ պալասան կուզան ու կերթան,

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անձքեր զանազան կուզան ու կերթան.
Արեւ առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպ աղօթարան կուզան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայլալուծ մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուզան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, ազգերը հիւր են.
Այսպէս է կանոնը բնական—կուզան ու կերթան:

ԴՈՒ ԶՈՎ ԽՆԴԻՆՍ...

Դու զձով խնդրես, մայր իմ անուշ
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցիր հոս՝

Անլաց աչօք դիտէ՛ գորգիդ

Եւ իւր վերքերն արիւնահոս,

Թրքաց մայրեր թող լան ու դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Խնչպէս երբեմն օրրանիս մէջ,

Կակուղ ձեռամբ փայփայելով

Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր

Իբրեւ հրեշտակ նւագելով:

Զիս հանգչեցուր ի հող ու դուն

Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

«Նորեկ որդւոյս կենաց արև

Ձեզի համար փայլի, Հայեր»:

Այսպէս յայնժամ դու կերգէիր

Օրօրոցիս նստած քովեր:

Անոնց համար շիջաւ և դուն

Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

Կարմիր կայլակք ցայտեն վերքէս.

Սակայն, մայր իմ, նայէ՛ հորս դիս,

Սրիւնառուշտ թիւրքերը տես

Հազարներով փռած գետին:

Կերաւ զանոնք մեր սուրն ու դուն

Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

Որպէս վիշապ մորնչելով,

Յանկարծ մեզ վրայ յարձակեցան,

Յնցեց Զէյթուն գլուխը ժայռոտ,

Իւր վհից մէջ թօթափեցան:

Կարմիր ներկաւ ձորք մեր ու դուն

Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

Ու ծափ զարկին մեր հարց սուերք,

Զի չէ մեռած Հայոց կրակ,

Ու ցնծացին այնչափ զոհեր,

Զի լուծաւ վրէժ յարեան վտակ:

Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն

Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,

Հատուցանես զայն սիրունուս,

Վերջին անգամ գրկեմ մեր հող,

Ուր արդ կիջնեմ ի ծոցն անլոյս:

Խաչ մը տնկէ՛ վրաս ու դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն

Պէշկէթաշեան

ԵՍ ԵՐԳԵՑԻ

Ես երգեցի մի երգ յուզած,

Զանֆիտայի մօր մօտը,

Նա փարատեց իր կարծիքը,

Ասաւ որդու կարօտը:

Թւաւ մայրը դեռ չգիտէր,

Թէ Զէյթուն է իր որդին,

Իմ դիւցազնի երգից լսեց,

Որ ապրում է սիրելին:

Լսեց նոր նոր յաղթանակներ,

Լուրեր հարցուց Բաշկալից,

Հուրաց—փայլեց սև աչքերը,

Խնչպէս կրակ բոցալից:

Շանթի նման լի շեշտերով—

Կրկնեց որդու անունը.

Մայրական վեհ զգացմունքով,

Յայտնեց իր երջանկութիւնը:

«Ես բաղդաւոր մայր եմ, ասաւ,

Արդէն հասայ փափագիս,

Պատմութիւնը դափնեայ պսակ—

Պատրաստել է զաւակիս»:

Յահարատ

ՀԱՅ ԶԻՆԻՈՐ

Մասիսի ճակատին ամպրոպ պատուեցաւ,
 Հայերուն սրտէն վախ փարատեցաւ,
 Նոյնք է տակա ձեռին այնալու,
 Սուլթան ունիւս ուժ ինձ գիմանալու:
 — Ըստրուկ եմ եկել կը դառնամ ազատ,
 Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ:
 Անսուտ երդումով ուխտել եմ ազգիս —
 Զոհել մարմինս, զոհել և հոգիս,
 Արճամարհել սով և խիստ նեղութիւն,
 Տալ Հայաստանին սուրբ ազատութիւն:
 — Ստրուկ եմ եկել կը դառնամ ազատ.
 Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ:
 Էլ ես ահ չունիմ քու վախկոտ զօրքէն,
 Զգւած եմ ես քո շարիաթ օրէնքէն.
 Ձեռքիս ունիմ ես Ղեռնդի լախտը,
 Կը ջարդեմ փշրեմ քո փթած թախտը.
 — Սուլթան սիրտ ունիս, իջիր մարտի դաշտ,
 Տես քու առջին է թշնամիդ անհաշտ:
 Դամառ-Բաթիպա

Հ Ե Ր Ո Ս Ի Ն

Դու անցար, հերոս, դէհ հանգիստ քեզ քուն,
 Դու լուսադէմին մեռար լիայոյս,
 Դու ճամբորդ էիր դէպ ազատութիւն,
 Երբ դեռ հեռու էր հեռու արշալոյս:
 Տես ի՞նչ հերոսներ, երգովդ ստեղծւած՝
 Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.
 Հերոսների մէջ դու մեռար, հերոս,
 Մարմնով դառար հող, հողով արշալոյս:
 Է՛րնէկ քո յոյսին, նա, որ չէր դողում,
 Երբ թոյլ տնքում էր մեր ճահիճն այնոյս,

Այն օձեր էին և գորտեր սողում,
 Քանզի գալու էր անշուշտ արշալոյս...
 Սակայն երբ ազգդ թմրկով ու փողով
 Դէպ՝ երբ ազատութիւն երթայ սրտայոյս,
 Դու կգաս այնտեղ յարութեան շողով,
 Բայց ննջիր... դեռ կայ մինչև արշալոյս...

Շ Ա Ր Ք Ի

Այսքան տարի դու ննջեցիր քաւ է, քաւ,
 Տխրութիւնդ ողջ հայերիս ցաւ է, ցաւ,
 Արև եկաւ քո գլխիցդ անցկացաւ.
 Զարթիր, զարթիր, իմ անմահն անձկալի,
 Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:
 Գարունն էկաւ, ձմրան դուռը գոցեցաւ,
 Սպասելով մեր սրտերը խոցեցաւ.
 Դիշերն անցաւ առաւօտը բացեցաւ:
 Զարթիր, զարթիր իմ անմահն անձկալի,
 Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:
 Աղաչում եմ, խնդրում մայրիկ, արթնացիր,
 Քո արարքէդ դու ամաչիր, դու երկիր,
 Քոյրերիցդ ողջիցը ետ մնացիր:
 Զարթիր, զարթիր, իմ անմահն անձկալի,
 Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

Խ Ա Ն Ի Ե Ր Գ Ը

Լուսին չկար մութ գիշեր էր,
 Մի խումբ կերթար արագ-արագ,
 Տեսանք որ քաջ խանի խումբն էր,
 Զինւած էին բոլոր նրանք:
 Կհանքները ազգին նւիրած,
 Կտրիճ խանն առաջ ընկած,

Գնում էին տաճկաց սահման,
Թռչում էին ինչպես կրակ:
Հրացանները ուներին,
Դրօշակը պարզել էին,
Գնում էին ուրախ զևարթ,
Ազատութիւն երգում էին:

Մութ անտառից անցնում էին,

Ամեն մէկը առիւծ էին:

Նժոյգ ձիաները նստած,

Մերկ սուրերը քաշել էին,

Երբ քաջ Խանը ելաւ Բասեն,

Թնդանօթներ արձակեցին,

Հայ քաջերի մօտիկներից,

Գնդակները գոռգոռացին:

ՏՈՒՐԲԱՆԻ ԵՐԳԸ

— Ուրեմն մնաք բարձր, աղնիւ ընկերներ,

Մենքն ալ ձեր հոգուն երջանիկ քաջեր:

Քո հողին մենքն ալ ճալվորիկ ազատ,

Կեցցես դու յաւէտ Անդրանիկ քո զարդ:

Քաջի համբոյրով տաւ հրաժեշտ,

Անվեհեր Տուրբախ, ընկեր հարազատ:

Բոպէ չանցկացաւ սրացաւ ուժգին,

Վեհ Դաշնակցութեան սուրբ անւան արժան:

Երկինք պատել էր գունդ-գունդ սև ամպեր,

Արեգակ չը կար, մութ ու խաւար էր,

— Դժար էր դատել քաջ ընկերներից,

Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից:

Հեռից տեսող՝ էլ ու աշիրաթ,

Երնէկ կուտային քեաֆուր Տուրբախին:

Ահ ու սարսափով լցած թիւրք միլլաթ,

Կապոյտ աչերից արցունք կը ցայտէր:

Նժոյգ ձի նստած, ահեղի դէմքով,
Երկինք ձայն տւեց վեհ քաջի արարք,
Խուսալ փաշէն լցած էր դողով,
Թռչում էր ցուրկ, ցայտում էր կրակ:

Անհամբեր սրտով Դաշնակի ձիւղեր,
Կտրիճ Տուրբախի գալուն կըսպասեն,
Փառք ու պարծանք են մեզ այսպէս քաջեր,
Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն:

ՏԱՐՈՆԱՅԻ ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԸ

Մայիս ամսայ դու զեփիւռիկ,
Սլանում ես Մշու լերինք,

Կորուցեր եմ քողցր հայրենիք,

Կուլամ, կողքամ չասես հերիք:

Լեռն Մշոյ է նման Մասիս,

Մայրիկս կուլայ կանչում է զիս,

Կասէ — որդեակ, եկուր առ իս,

Բնւ է այսքան դու թափառիս:

— Պանդուխտ եմ ես օտարութեան,

Ատեն չունիմ, որ առ քեզ գամ,

Ցաւերս շատ են վիշտս յարածամ,

Գուցէ սոցա եմ ես արժան:

Պանդուխտ եմ ես տարճացի,

Շատ ժամանակ ցաւօք մնացի,

Մշու երկրէն հեռու կացի,

Հայրենիքս ես միշտ լացի:



ՎԵՐՔԵՐՈՎ ԼԻ ԶԱՆ ՖԻՏԱՅ ԵՄ

Վերքերով լի ջան ֆիտայ եմ,
Թափառական տուն չունիմ,
Եարիս փոխան զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունիմ:

Արնոտ երկիր, սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,
Տանջւած հայրենիքիս սէրն ինձ
Զը վախեցուց վտանգից:

Սասնոյ լեռներ գողգոթայից—
Շատ բարձր էր, խիստ դժւար,
Կեանքի խաչը ես շալակած,
Այնտեղ տարայ սիրայօժար:

Ես խաչեցայ, ջանֆիտայի
Սկզբունքս սուրբ մնայ,
Թող իմ արեան կաթիլներով,
Հայ հայդուկը դօրանայ:

Մակեդոնին հետ միանալը,
Իմ խաչովս պսակեց,
Եղբայրական սիրոյ զէնքով,
Գազան սուլթան խորտակեց:

Կախաղանից երբոր քամին—
Ինձ տարերէ ճօճալէն,
Յիշէք Պետրոս Սէմէրճեանին,
Թիւրքից վրէժ գողալէն:

Ապա հանգիստ հող կը մտնեմ,
Յոյսս դուք էք ընկերներ,
Շարունակէք սիրած գործս,
Իաշնակցութեան վեհ քաջեր:



ՀԱՄԱԶԱՍՊԻ
ՀԱՅ ԿԱՄԱՆՈՐԱՆԵՐԻ Գ. ԳԵՂԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

ԱՆԹԻ ԴՎՐԵՆ

Անթիւ դարեր թափառեցինք,
Դարձեալ օտար հող մնացինք,
Մեր անուշիկ Հայաստանէ,
Հեռու-հեռու ընակեցինք:
Հայ անունը ամենի մօտ,
Դարձել է լոկ չնչին մի խօսք,
Հայեր, հայեր մտածեցէք,
Ձեր խոր քնից սթափեցէք:
Սասնայ քաջեր ձեր գլուխներ,
Բարձրացրէք գերեզմանից,
Տեսէք թէ ձեր երջանիկ ազգը,
Թէ ինչ վիճակի է հասել:

ԵՐԳԵԼ ԿՈՒՋԵՐ

Սուրբ հայրենիքս երգել կուզէի.
Իմ երգերի մէջ հոգեբուխ հնչիւն,
Երկնքի հետ խօսող լեռներ վիթխարի,
Եւ թռիչքն արծւի այն վեհ բարձունքում...

Մայր ժողովուրդս երգել կուզէի,
Յորձնուտ Արաքսը չքնաղ ափերով,
Հրեղէն նժոյգ երգել կուզէի
Մասսայ լանջերում սրարշաւ տալով:

Հայ կտրիճներին երգել կուզէի,
Եւ կուի կոչը հպարտ վայրերի,
Սուրբ ազատութեան տօնը յաղթական,
Եւ վառ ապագան իմ հայրենիքի:

Բայց կոպիտ ձեռներ փշրեցին քնարս բէկ-բէկ
Բայց կոպիտ ձեռներ նրա լարերը կտրեցին մէկ-մէկ

ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱՋԱՆ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդատար.
Բայց աւանդ, այս բանտում փակւած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կուտում և ես:

Հանապաղ տանջւեցայ քո ճակատագրով,
Սրտումս շղթաների ձայներ կրելով...

Ձեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՛խ, կամ ոչնչանալ կամ լինել ազատ:

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կուել,
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել,
Բայց, աւանդ, այս բանտում փակւած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կուտում և ես:

Չ'գիտեմ, ինչպէս է կոխն հրգեհունում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարւում է միշտ համբաւ սպանութեան անեղ
Թափում է ազգ արիւն, բայց ես չեմ այնտեղ:

Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է...
Թող այս տեղ չարչարւիմ անձանօթ կապւած,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ ազատւած:

ՀԱՐԻՔԻ ԵՐԳԸ

Օ՛խտը տարով, ծխտը սարով,
Ա՛յ սիրական իմ աշխարհ,
Հեռացել եմ քեզնից լալով,
Հարկւ ընկել սարէ-սար:

Կեանք եմ մաշում, սև օր քաշում,
Ընկած խալիի դռներին.
Քու սէրն է ինձ էրում, մաշում,
Հոգիս կը տամ էդ սէրին...

Կուզեմ հողիդ վարձան առնեմ,
Հող ու ջրիդ ես դուրբան.
Բայց հնց անեմ՝ ճամբէդ բռնեմ,
Բաղդն է կապել իմ ճամբան:
Վայ դարիբին—օրը՝ օր չի,
Վայով կեանքն է անցնում.
Դուրսը մեռնի, չօլում կորչի—
Ո՞վ է խեղճին հարցնում...

Ա. Ծառուբեան

ՁԵՅԹՈՒՆ ԱՆԿԱՆ

Ձէյթնուն, անկախ դու աշխարհիկ,
Քո սար ու ձոր եմ անառիկ,
Ամեն մի քար և քանդակ,
Շաղախել է քո արիւնդ:

Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ:
Դեռ ես քո գորեղ բազկում,
Ռուբինեանց երկիրն է շարժում,

Յիշատակ նախնի դիւցազանց,
 Պատկերն է քո քաջ զաւակաց:
 Հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ:
 Մզրախն է ունեցած կայքդ,
 Դո ապրուստն է և քո կայքն,
 Բոնութեան լուծը թիւրք մարդու,
 Էդ զէնքով ես թօթափել զու:
 Հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ:
 Կէցցէ Գրիգորեան հաւատը,
 Հայ պահել է իր ժողովուրդը.
 Ո՛հ մի կրօն աշխարհիս վրայ,
 Չունի ազատ ոգին սորա:

Հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ:

ՀԱՅԻ ՆՇԱՆԱՐԱՆԸ

Հնարագէտ լինենք հայեր,
 Քանդենք ելզըզը հնարով
 Խլենք թուրքից մեր սուրբ վայրեր,
 Կեանքի արեան կաթիլներով:

Թէև թրքաց կայ պետութիւն,
 Մեզի էլ կայ շատ շատ գիտուն,
 Եկէք սիրենք սէր միութիւն,
 Նրանց յաղթենք զազափարով:

Մեր քաջ Արաբօն անվեհեր
 Ընկերներն են անձնանէր:
 Յաղթութիւնը մերն է, հայեր,
 Թէկուզ դան հազար հազարով:

Սուլթանն աննպատակ սատկի,
 Մենք ծառայենք խելք ու մտքի:
 Հոգով զինւած ելնենք ոտքի,
 Յաղթութիւնը մերն է քաղով:

Լինենք թուրքին անհաշտ-ընդդէմ,
 Դառնանք առաքինի վսեմ,
 Երգիչըս էլ կը մասնակցեմ
 Մեծ գործին, երգով քնարով:

Ճահրամ

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

— «Որսկան աղպէր, սարէն կուգաս,
 Սարի մարալ կը փընտռես.
 Ասն, ետբար դուն չտեսար
 Իմ մարալըս իմ բալէս:
 Դարդի ձեռքէն սարերն ընկաւ
 Իմ արեւս, իմ բալէս,
 Գլուխն առաւ քարերն ընկաւ,
 Իմ ծաղիկս իմ լալէս»...

— Տեսայ, բուրիկ, նըշուուն բալէք
 Կարմիր կանաչն է կապեր,
 Սիրած ետրի համբոյրի տեղ
 Մըրտին վարդեր են ծլեր:

— «Որսկան աղպէր, ասա ետբար,
 Ո՞վ է հարաւ իմ բալիս,
 Ո՞վ է գըրկում չոր գլուխը
 Իմ մարալիս իմ լալիս»:

— Տեսայ բուրիկ դարդոտ բալէք
 Քարեն է դըրեր բարձի տեղ.
 Անուշ քընով տաք գընդակն է
 Կըրծքում գըրկեր հարի տեղ.
 Սարի մարմանդ հոգն է շոյում
 Ճակտի փունջը մարալիդ,
 Ծաղիկներ են վըրան սըզում,
 Ազիդ բալիդ, խեղճ լալիդ...
 Ա. Դաստակեան

ՆՊԱՏԱՆԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ

Նպատակիս հասնեմ միայն,
 Թող զիս հանեն կախաղան,
 Կախաղանէն խեղդուկ ձայնով
 Պիտի գոչեմ ախ հայաստան:

Ախ, Հայաստան սիրտս ու հոգիս,
Քեզ նւիրեմ, ընդունէ,
Թէ կարելի է, թող ես մեռնեմ,
Թաք Հայաստան ոտքի ելնէ:

Անոր սիրուն բանտն ալ մտնեմ,
Պալատ է այն ինձ համար,
Ոտք ու ձեռքս շղթայակալ,
Երջանկութիւն է ինձ համար:

Թէ մինչև իսկ աքսորւիմ ալ,
Թափառական գտնէ զին բաղք,
Հայաստանի սիրոյն համար,
Փշոտ վայրեր կըլլան դրախտ:

Ախ Հայաստան դու սիրուն վայր,
Մինչև երբ այսպէս քու որդիք
Քեզնէն հեռու պիտ' հառաչեն,
Իսկ դուք մինչ երբ թափառիք:

ԳԼԳԼԱՆՈՎ ԶՈՒՐ Ե ԻՋՆՈՒՄ

Գլգլալով ջուր է իջնում
Մշոյ մշուշ սարերէն,
Ծիծեռները ծիււ, ծիււ եկան,
Գարնան գալը երգելէն:

Գարուն չը կայ հայի համար,
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն,
Գերեզմանիս հողին հաւսար,
Թող փուշ բըննի իմ վրէն:

Գնա ծիծեռ, թող ինձ մենակ,

Վէրքը սրտիս հողի տակ:

Բայց երբ տեսնես թշնամու դէմ,

Հայ ժողովուրդ սարի պէս,

Չէնքը ձեռին, հպարտ կանգնած:

Կուրծք դէմ տւած ժայռի պէս:

Ախ այն օրը արի ճւայ,
Գարնան գալը նոր կանչէ,
Հայոց գարնան, որ բիւր բարև
Սիրտս խորէն ղօղանջէ ..

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես ընկել եմ քրդերի մէջ,
Արնաշաղաղ վէրքով լցւած,
Ինձ կարծել են մեռած,
Թողել գնացել են:

Ես այս արեան դաշտում,
Անտէր, անտիրական,
Կիսամեռ թշուառ ինչ անեմ,
Մնացել եմ անօգնական:

Երբ նայում եմ լուսնի լուսով,
Հազարներով փուած գետին,
Սատկած և վիրաւոր,
Շարաֆ բէգի քիւրտեր,
Մըմնջում են մեկամաղձոտ,
Հէգ ղլօներ:

Տեսարանն ուրախալի էր,
Թեթեւանում էր իմ վշտերը:

Քրդական լաց կոծի միջից,
Յանկարծ լսեցի, մայրիկ ջան,
Ախ այդ ազդու—

Հառաչանքն էր հայկական,
Գնացի դէպ նորան,

Տեսա՛յ ընկերս էր,
Ձինւոր էր նա վէրք ստացած,

Արեան դաշտն ընկել ինձ նման:

Ձեռք մեկնեցի մտերմիս,

Ասի, նայիր չորս բոլորդ,

Տես և հոգի ստացիր,

Հայի յաղթութիւնից,
Մեծ է ջանփիտայր,
Փառք իւր դրօշակին,
Յաղթութիւնով ոգևորւած,
Հեռացանք այն արեւան դաշտից:

Երուսաղէմի դաջի պէս,
Տեսէք վերքերու տեղերը,
Հաւատացէք հայ զինուորի —
Ուղղութիւնը,
Որ չէ խնայում ձեզանից —
Իւր արիւնը, —
Ազատութեան գոհերն ենք,
Կարեկից աւձուէր սրտով:

Ֆահրատ

ԻՄ ԻՂՁՍ

Ո՛րքոս ուրախ կեանքս անվրդով
Սզատ խօսել կուզէի,
Հոգիս հանդարտ խաղաղ կերպով
Անվերջ գործել կուզէի:

Հայաստանի սուրբ երկիրներ,
Գնալ տեսնել կուզէի:
Դաշտ և հովիտ բարձր լեռներ
Փութալ թռչել կուզէի:

Աւարայրի ասպարիզում,
Նետս լարել կուզէի,
Վատ թշնամու զինւած խմբին,
Զարդել փշրել կուզէի:

Անի քաղքից քար մի բերէք
Վանայ Մշու մի բուն հող,
Հայաստանի ջրով շաղւած
Հայ մանուկը շինէ թող:



ԳԵՌԻ, ՎԱՐԳԻՍ և ՀԱՄԱԶԱՍԳ
ՀԱՅ և ԱՄԱՆՈՐՆԵՐԻ Գ. Դ. ԵՒ Ե. ԳՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ

ԷՅ ԶԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Է՛յ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,
Սարերը կորած երկնից մովի մէջ,
Զրերը անուշ, հովերը անուշ,
Մենակ բալէքը արիւն-ծովի մէջ:

Քու հողին մեռնեմ, անգին հայրենիք,
Ա՛խ, քիչ է, թէ մի կեանքով մեռնեմ,
Երնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրբաւոր քեզ մատաղ անեմ:

Ու հազար կեանքով քու դարգին մեռնեմ,
Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն.
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,—
Է՛ն էլ քու փառքի գովքը երգելուն,—

—Որ արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ
Նոր օրւայ ծէգիտ, աղիդ հայրենիք,
Ու անսւշ երգեմ, բարձր ու զիւ գովեմ
Կանաչ արեւդ, ազնա հայրենիք...

Ա. Իսահակեան

ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ

Հաղիւ լրացաւ քսան մէկ տարիս,
Աղւամազ բաւ երես ծնօտիս,
Թշերէս կարմիր վարդեր կը կաթի,
Զիւիւս ամուր՝ ասես երկաթի:

Տէ՛ք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ,
Սուր ահռանքովս երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ, ասէք ի՞նչ անեմ:

Առջեւ դրէք մարդ հարիւր հազար—
Զարդեմ, տրորեմ զերդ բողկ ու գազար.
Ինչ այլք շարթու մէջ՝ այն ես օր կանեմ...
Մէջս այդքան ոյժ, ասէք ի՞նչ անեմ:

Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,
—Նրա սուրբ հողին ըլեմ ես ղուրբան—
Մարմինը ուժեղ ու առոյգ է հային,
Այլ, ափսոս թմբած է նորա հոգին:

Թէ մի օր զարթնի նորա վեհ հոգին,
Նա պարզ կը ցուցնէ օսմանլի ազգին,
Ո՛վ էր երկուսէն ստրուկ և կամ տէր...
Ա՛խ, երբ պիտի թնդաք, խեղճ հայի սրտեր:
Գամառ-Քաթիպա

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք առանց ի վիճակ,
Պէտք է սուրբ ծառայենք երկար ժամանակ,
Պարսկաստանի խորքից եկել է նամակ.

Գնում ենք բարով
Կուշանանք տարով,
Արիւն սուր ու թուր
Պատերազմի դաշտ—
Կապասէ մեզի:

Դուշմանը տւեց մեզ ջան-Ֆիտայ անուն,
Այդ անւան համաձայն՝ տեսաւ զօրութիւն,
Մենք չենք սիրել ազատ կեանքի բռնութիւն:

Ուխտել ենք կուել,
Այդ սիրով մեռնել,
Համոզւած ենք որ—
Միայն զէնքով կայ—
Հային փրկութիւն:

Ստամբուլ պէտք է լինի արեան ծով,
Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,
Գոթուրից դէպի Վան անցնել շտապով.

Այլից Վարդանը,
Զախից Իշխանը,
Գրաւել Աղբակ,
Տաբածել սարսափ,
Փառք Ազատութեան:

Ֆահրատ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԶԷ

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ կենաց բաղձը,
 Ինձ համար չէ երջանկութիւնը,
 Եւ մրայօն կուսի աչքերը,
 Նոցա արցունք չեն ինձ համար:

Ինձ համար չէ փայլուն լուսնի,
 Անտառ ու սար լուսաւորելը.

Գարնան վարդի երգչի տաղերը,
 Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ բարեկամաց,
 Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
 Զատիկ օրւայ ուրախ ասելը,
 «Քրիստոս յարեալ» չէ ինձ համար:

Ինձ համար չէ ծնողաց լացը,
 Ինձ համար չէ աղջկայ տիւրիւրը,

Գերեզմանիս վրայ արտասուելը,
 Բարեկամաց՝ չէ ինձ համար:

Բայց ինձ համար կուգայ ժամը,
 Կերթամ թշնամեաց պատերազմը,
 Եւ մահառիթ սպանիչ գնդակը,
 Անդ պատրաստուած է ինձ համար:

Պատկանեան

ԻՍԼԱՄՆԵՐԻ ԳՈՌ ՎԱՇՏԵՐԸ

Իսլամների գոռ վաշտերը կատաղի,
 Պաշարել են մեր լեռները սոսկալի:

Ելէք, ելէք, քաջ հայեր,

Արիւն թափենք անձուէր,

Վասն ազատման հայրենեաց,

Թափենք մեր վերջին արիւն,

Այս է պահանջում դարը:

Շէնիկ, Սէմալ շրջապատուած քիւրդերով,
 Տաւուրիկի անցքն է փակուած զօրքերով:

Մի վախենալ քաջ Ռասուն,

Մի վախենալ քաջ Ռասուն,

Մեր պապերից սորված ենք.

Մեռնել տղամարդու պէս,

Սուր մեզ թողին յիշատակ:

Քոյրն եղբորից բաժանելու եկել են,

Հայր և որդի սպանելու եկել են,

Ի սէր Աստուծո ղժար է—

Հպատակել իսլամին,

Լաւ է մեռնել առանց հաց,

Քան թէ յանձնուել թիւրքին,

Սնիւիդ չեն ու անասուած:

Թնդանոթների դէմ կուենք քաջ սրտով,

Սովին դիմադրենք կաթով, բանջարով:

Դէ, քեզ տեսնեմ քաջ Մուրատ,

Սուրդ շարժիր անվհատ,

Ռուսահայ եղբայրներ—

Եւրոպայի պէս անխիղճ չեն,

Գուցէ կզան օգնութեան:

Գարնան ելման գետի նման գոռալէն,

Թափենք դէպի մեր դիւշմանը փոփոալէն:

Թող որոտան հրացանք,

Մեր ժայռերի ծերպերից,

Թող խոցոտուի շուն վալին,

Շանթենք չար սուլթանի սիրտը,

Որպէս կայծակ երկնքից:

Քաջ աղջիկներ առէք վառօդ ու կապար,

Լցէք դատարկ փամփուշտները չարաչար:

Իսկ դուք կանայք ժրաջան,

Առէք սուր ու հրացան,

Ազատէք մեր լեռները,

Ձեր մայրական արիւնով:

Ֆահրատ



ՊԱՐԶԻՐ ԱՂԻԻՐ

Պարզիւր աղբիւր, պարզիւր քեզնից ջուր տանեմ,
 Պարզիւր, պարզիւր բէգի տղին ջուր տանեմ:
 Աղբիւր գիտե՞ս բիւրդը մեզի ի՞նչ կանէ,
 Կը կողոպտէ, կը չարչարէ կսպանէ:
 Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,
 Մեր սեփական թագաւորներ ունէինք:
 Գահ ու փառքից ազատ կեանքից զրկեցինք,
 Արիւնարբու թշնամու ձեռք մատնեցինք:
 Դէ՛հ, չուտ պարզիւր բէգի տղին ջուր տանեմ,
 Պարզիւր, պարզիւր Խան-Մուրատին ջուր տանեմ:

ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացեցաւ ժամանակ է զարթնելու,
 էրթամ ախոռ, գոմշուկներս լծեմ՝ գութան վարելու,
 Դէ՛հ, գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը էրթանք աշխատինք
 Հարկ ու խարջի վատէն մօտ է, վօթենք արիւն ու բրտինք:
 Հայի գութան, հայի գութան, որի՞ համար կը ջանաս,
 Ո՛վ քեզմով կտանջւի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս,
 Այն օր, երբ քեզ ձեռքս առի՝ ազատ օրս կորուցի,
 Անվախ սիրտս վհատեցաւ հոգիս թիւրքին մատնեցի:
 Բաւ է գութան մեր տանջանքը, համբերութիւնն
 Վերջ ունի,

Դուռն տեսա՞ր որ մեր դուշմանը ամօթ, խելք ու
 գութ չունի:

Արի՛ փշրեմ ես քո խոփը, ասանք դարբինին կռելու,
 Կռենք—կռփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կռելու:
 Եղբարք հայեր, առէ՛ք խոփը, տանք դարբինին կռելու,
 Կռել—կռփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու:
 Քամառ-Գաթիպա

ՀԱՅԴՈՒԿԻ ՆՇԱՆԱՇԻ ԵՐԳԸ

Հայաստանից եկած զինուոր,
 Սիրահանս—կեանքիս հատոր,
 Քեզ կսպասէի օրէ օր,
 Շողշողուն գէնքերիդ մատաղ:
 Տուր գէնքերդ առանձին պահեմ,
 Յոգնած-տանջւած հոգիդ շահեմ,
 Վառ համբոյրով դէմքդ շոյեմ,
 Թրթոան հեարդներիդ մատաղ:
 Արկածալի կեանք խորհրդով,
 Լեռներ ես անցել շտապով,
 Արեգակն է այլքի տապով
 Սևորակ պատկերիդ մատաղ:
 Կդաս դու զոհերի երկրէն,
 Պատմիր մոկունքցի եսթերէն,
 Խօսիր Իսսակի խօսքերէն,
 Սրտաշարժ խօսքերիդ մատաղ:
 Զով Սասունի հովէն կուգաս,
 Վանայ ծփան ծովէն կուգաս,
 Անդրանիկի քովէն կուգաս,
 Զօրաց շէֆ զինուորիդ մատաղ:
 Սերոբ փաշի գերեզմանը,
 Տեսել ես իմ սիրահանը,
 Դիտել ես ողջ Հայաստանը,
 Ապագայ յոյսերիդ մատաղ:
 Սիրաս է դառել սիրոյ անօթ,
 Տասն օր կեցիր՝ առնեմ կարօտդ,
 Յետոյ դնայ Սաքոյի մօտ:
 Թանկագին ընկերիդ մատաղ:
 Արփենիկն եմ, լի բերկրանքով,
 Դպւեմ պաշտելոյս բողձանքով,
 Քնենք ամուսնու տենջանքով,
 Սիրունու կարօտ սէրիդ մատաղ:

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

— Մայրիկ ջան, — մնաւ բարով,
 Ես կերթամ սարով քարով,
 Վերադարձիս սպասէ,
 Բաժանում եմ մէկ տարով:

Մայրիկ ջան, մայրիկ ջան,
 Բաժանում եմ մէկ տարով:

— Բարով երթաս, որդեակս,
 Իմ փայլուն արուսեակս,
 Էլ անկողին չեմ մտնի,
 Մինչև դառնաս հոգեակս,

Իմ բալէս, իմ բալէս
 Մինչև դառնաս հոգեակս:

— Նեոռ երկիր պիտ գնամ,
 Օրհնէ այնտեղ չը մնամ,
 Ճամբու պաշար պատրաստէ,
 Մի լար, անփորձ կը դառնամ:

Մայրիկ ջան, մայրիկ ջան,
 Մի լար անփորձ կը դառնամ:

— Նպատակէդ չը շեղուիս,
 Որ պիտանի մարդ լինիս,
 Աղօթքս անէծք կը դառնայ,
 Թէ որ չարին հետեիս:

Իմ բալէս, իմ բալէս,
 Թէ որ չարին հետեիս:

— Աշխարհն իրար է անցել,
 Արիւնը ծով է դարձել,
 Հանգիստ քնել չեմ կարող,
 Սիրտս վէրքով է լցուել:

Մայրիկ ջան, մայրիկ ջան,
 Սիրտս վէրքով է լցուել:

— Գնան հասիր օգնութեան,
 Եղբր հոգի փրկութեան,
 Ես կաղօթեմ անդադար
 Տէրը լինի քեզ պաշտպան,

Իմ բալէս, իմ բալէս,
 Տէրը լինի քեզ պաշտպան:

Գ. Տալեան



Գ Ր Օ Ն

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ Բ. ԳՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՁԻՆԻՈՐԻ ԵՐԳԸ

Թուի իմ նժոյգ, սլացի՛ր շուտով,
 Տա՛ր ինձ ցանկալի կուի փոթորիկ,
 Կուի մէջ միայն, ես արեան գնով,
 Կ'փրկեմ իմ խեղճ ստրուկ հայրենիք:

Տար ինձ այն աշխարհ — անցեալում հզօր,
 Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
 Ուր աւանդ դժբաղդ եղբայրքս այսօր,
 Իւր կեանքն է ողբում օտարին գերի...

Անցան շատ դարեր, անցան շատ տարիք,
 Ազգս շատ ապրեց բազմերիկ յոյսերով,

Բայց նորան երբէք չժպտաց երկինք,
Չտեսաւ նա կեանք խաղաղ, անվրդով:
Միշտ լուռ ու խոնարհ, անողորմ բաղդին,
Երկամ սպասեց նա կեանքի գարնան,
Բայց նորա առջև ոստի թշնամին,
Իւր սրով փորեց կեանքի գերեզման...
Դէհ, թռիր նժոյգ, սլացիր շուտով,
Տար ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտունի է զինւորն իւր արեան գնով,
Ազգին պարգևում յաղթութեան դափնիք:
Ա. Մատուրեան

ԿԱՐԿՈՒՏ ՏԵՂԱՅ

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը,
Ֆիտային էր գաշնակցական վրէժ լուծում հովտումը:
Սոսկած քիւրզը քնաթաթախ մարդիկցին,
Չեր երազում ջնջել իսպառ ֆիտայիցը լուսաբացին:
— Եաման Ասուած, ֆիտան եկաւ հըր փախչենք.
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ բրդունին:
Մի վախենար հանգիստ կեցիր բաջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժինդիր բաջ ֆիտան:
Մի ժամայ մէջ Մարդիկ ցեղը ջնջեցաւ,
Խանասորա կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկեցաւ:
Փչիր զեփիւռ, դէպ Առաւուր մենք թռչենք,
Դիրքեր բռնենք գառայ հալայ ձիւնի ջրով ճաշակենք:
Մերթ կուում է, մերթ բարձրանում քաջ ֆիտան,
Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան:
Չկար Կարօն, տխուր պատեց ամենքին
Երանի է նրա հոգուն, որ զո՞հ դարձաւ այս կուին:
Քեզ ենք յանձնում, ով պաշտելի Առաւուր,
Կրծքիդ մէջը ամուր պահէ, անմահ զոհերն հայերուն:
Հայեր, յիշէք նւիրական այս օրը,
Յուլիս ամսի քսանինգին կատարեցէք այս տօնը:

ՊԵՏՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարահիսար լեռան կրծքին,
Նա էլ ընկաւ վերաւոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցւած,
Չար թշնամու գնդակով:
Ժայռոտ լեռան լերկ կատարից
Վար սլացիր սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ
Ու ջիւանուն հով արա...
Խոցւած սրտից մուգ արեւը
Կաթիլ, կաթիլ կծորայ,
Ա՛խ, ջիւանու կեանքն է հոսում
Ցաւոտ կրծքի լայն վերքից...
Ժայռոտ լեռան լերկ կատարից
Վար սլացիր սև արծիւ,
Թևերդ բաց լայն թևերդ
Ու ջիւանուն հով արա...

ՍԻՐՈՒՆ ԾԻՄԵՌՆԱԿ

Բարով ես եկել ծիծեռնակ սիրուն,
Ի՞նչ լուր ես բերել պանդուխտ հայերուն,
Գիտես որ մենք միշտ աչքներս յառած,
Քեզ ենք սպասում ամեն մի գարուն.
Գլուխս ծած խեղճ ու հեղ,
Ազաւում եմ անձ քեզ,
Եկել ես հայրենիքից,
Ի՞նչ աւետիս բերիր մեզ,
Եկել ես հիւր աստ մէկ լուր,
Մի սպասէ զուր,
Լեզուդդ սուր աւետիս տուր,
Մեզ ուրախացուր:

Ինչ լուր ես բերել սիրուն ծիծեռնակ,
Դու հայրենիքից աստ եկած թռչնակ,
Ասա, ինչպես է իմ հայրենի տունը,
Խօսիր ինձ հետ ազատ համարձակ:

Ասա մի բան իմանամ,
Որ քեզանից գոհանամ,
Ուրախացուր սիրտս իմ,
Տարակուսած չմնամ,
Դու սլացար սարէ սար,
Մինչ այստեղ հասար,
Դու ինձ համար բարով եկար,
Ասա մի խաբար:

ԹԱԹՈՒԼԻ ՔՐՈՋ ԵՐԳԸ

Եղբայրա թուրքի բանտում,
Արև, լոյսի կարօտով,
Վա՛յ իմ սև օրերին վա՛յ,
Ես ինչպես հագնեմ կապեմ,
Նաշխուն շորեր նարօտով,
Աւա՛ղ իմ սև օրերին աւա՛ղ
Ես դարդ ունիմ սարերով,
Թողէ՛ք վառւիմ ցաւերով,
Վա՛յ անբաղդ եմ, վա՛յ անբաղդ,
Ահա տարին լրանում է,
Չեմ ստացել մէկ նամակ,
Վա՛յ իմ սև օրին, վա՛յ,
Տխուր, տրտում սիրտս
Չունի ուրախ ժամանակ,
Աւա՛ղ իմ սև օրերին, աւա՛ղ,
Ես կրակոտ երգերով,
Թողէ՛ք վառւիմ դարտերով,
Վա՛յ անբաղդ եմ, վա՛յ անբաղդ:

Ես ինչպես ուտեմ խմեմ,
Երբ նա բանտում ծարաւ է, քաղցած,
Վա՛յ իմ սև օրերին, վա՛յ,
Ես ինչպես խնդամ, պարեմ,
Մի՞թէ խիղճըս է մեռած,
Աւա՛ղ իմ սև օրերին, աւա՛ղ,
Առանց նրան հնց մնամ,
Հաւ է մեռնեմ վերջանամ:

Վա՛յ անբաղդ եմ, վա՛յ անբաղդ:
Ֆահրատ

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՛լ լո՛ւնք, եղբայրք, հիմի է՛լ,
Երբ մեր թշնամին իւր սուրն է դրել,
Իր օրհասական սուրը մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,
Ասացէ՛ք եղբայրք հայեր, ինչ անենք,
Հիմի է՛լ լո՛ւնք:
Հիմի է՛լ լո՛ւնք երբ մեր թշնամին
Դաւով հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհքից Հայկա՛յ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք,
Հիմի է՛լ լո՛ւնք:

Հիմի է՛լ լո՛ւնք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին.
Մշակի ձեռքիցն էլ խփել խլեց՝
Այդ սուր ու խփից մեր շղթան կռեց,
Վա՛յ մեզ շղթայով կապւած գերի ենք,
Հիմի է՛լ լո՛ւնք:

Հիմի է՛լ լո՛ւնք, երբ մեր թշնամին
Սոսկալի գէնքը բռնած մեր գլխին,

Կուլ տալ է տալիս արտասուներ արատ,
Աղէխարչ բողոք վաղուց ապիրատ.
Մեր գլուխը լալու եփրատ հւր պտուենք,
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին
Լիրը գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնը հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից,
Պանդուխտ հալածեալ, եղբայրք հւր դիմենք՝
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին
Անհոգ մեր բերած ծանր գոհերին,
Իր լիրը, նզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է ի՞նչ անենք.
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին
Արհամարելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գլուխ դրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ հւր աղօթենք,
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չէ՞ն ասիլ, որ հայք արժանի էին,
Այդ ստրկական անարգ վիճակին.
Մեր Սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև երբ լոենք:

Թող լռէ մունջը անդամալոյծը,
Կամ՝ որոնց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հողի ու սիրտ քաջ,
Եկ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք.
Ու այնպէս լոենք:
Գամառ-Քաթիպա

ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԻՆ

Դու ամբոխային ծովացած դարտով,
Տեանեակ տարիներ տանջանք կրեցիր,
Եւ քեզ մոռացած անարատ սրտով,
Բիւր ցաւեր գրկած կոխ մղեցիր:
Քո հերոսական կուրծքդ դէմ դրած,
Անձնատուր եղած վսեմ գործերի,
Սէզ արծւի նման թևերդ փռած,
Դեզ էիր դնում արնոտ խոցերի:
Բայց մի դաժան ձեռք գետին գլորեց,
Դու մուրազաչոր ընդ միշտ լոցերի,
Արնոտ գնդակը սրտիդ մէջ սառեց,
Բիւրաւոր աչքեր լալով թողուցիր:
Գ. Տալեան

ԱՍՏԻԱԾ ՍԻՐԷՔ

Աստուած սիրէք, հայ աղջիկներ,
Եկէք ուխտենք միասին,
Այսուհետեւ էլ չսիրենք,
Կուրից փախչող վախկոտին.
Խիստ զգուշ կերպով նայենք,
Ոսկոյ սիրով մեռնողին,
Համբուրի տեղ թոյն կամենանք,
Թիւրքերից վրէժ չառնողին:

Տիրանիս պէս քաջեր սիրէք,
Արժանի են մեր սիրոյն,
Որոնք գիտեն սրով պահել,
Կին չեն յանձնել թիւրքերուն,
Ես քեզ մեռնիմ Տիրան, Տիրան,
Փառք գէթունի սիրական,
Հազար էրնէկ ամեն հայ կին,
Մարդ ունենար քեզ նման:

Բարգենիկս ոտքով օրրեմ,
Վառօդ մաղեմ ձեռքերով,
Վատ սուլթանի հետ գործ ունինք,
Դեռ հայ ազգը չէ ապահով.
Կ'գայ դարուն, մենք կսկսենք,
Նոր պործ, նոր կռիւ թիւրքի հետ,
Մեր լեռներից արիւն պէտք է—
Հեղայ ինչպէս Գեհնոն գետ:

Ֆահրատ

ՀԱՅՍՏԱՆԻ ԱԻԵՏԱԲԵՐ

Հայաստանի աւետարեր,
Ո՛վ դու կռունկ ձայնդ անուշիկ.
Արդ եկել էս օտար վայրեր,
Ի՞նչ լուր բերիր ինձ պանդխտիս,
Ո՛հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար իմ ողջոյնս անդ հայերուն:

Ըսէ կռունկ հայ զաւակաց,
Թէ ձեր եղբայր օտար վայրեր,
Բնիկ է բայց սիրտն չմոռցած,
Միշտ հայրենեաց կարօտ եղեր.
Ո՛հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար սիրտիս հետ և զիմ ողջոյն:

Մեր հարթ կանաչ մարգագետինք,
Ուր կազաւեն հայ օրիորդներ,
Արգեօք քաղէ իմ անուշիկ,
Սրտիս հատոր սիրուն վարդեր.
Ո՛հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար անկեղծ սէրս անդ հայերուն:

Մայրս կ'խորհիմ գիշերն ամեն,
Երբ աստեղը բարձր երկինս փայլեն,
Դառն արցունքներ աչքիցս վազեն,
Երբ կը յիշեմ իմ հայրենիքս.
Ո՛հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար արցունքներս անդ հայերուն:



ԳԵՌԻՆ ԵՒ ԻՐ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ

Գ Ա Ր Ո Ի Ն

Մի նոր, հրաշալի կեանքով շունչ առած,
Ժպտում է բնութիւն, գերթ մանուկ չքնաղ,
Եւ նոր զօրութեամբ երկիրն է զարթնած,
Եւ երկինքն յստակ ու գեղածիծաղ:

Այս խորհրդաւոր պահուն էս մենակ
Ծնկաչոք անա քեզ եմ աղօթում,
Խաչեցեալ Փրկիչ, քո հովանու տակ
Ցաւատանջ սրտիս իղձեր՝ եմ բերում:

Թող այս բերկրալից գարնան ջերմ արեւ
Իմ հայրենի տան վերայ էլ փայլի.
Մի օր, գէթ մի օր, թող քո առաջ
Այնտեղ հէք ծածուան օրհներգը լսի:

Թէ անցաւ և մեր ձմեռ ցրտաշունչ,
Թէ անպարտ արիւնն հասցրեց վարդեր,
Եւ տառապելոց ողբերն ու տրտունջ
Դարձան դոհութեան խաղաղ մաղթանքերը:
Յ. Յովհաննիսեան

ԱՂԵՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի,
Գետնին նայելով՝ մնացել եմ նստած,
Ձեռս ծոցումս գլուխս մէկ լեռ քարի
Տւած՝ լալիս եմ, օրս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետեւիս,
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,
Աղի արտասունքով էրլած, խորոված,
Երեսիդ նայեմ, մնամ քարացած:

Ծնող, ազգականք հեռու ինձանից,
Լուսին նայելով ձեր սէրը յիշելով,
Եարար երբ կըլլի, որ ես ինձանից
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով:

Աչքս ծով դարձաւ ճամբին նայելով.

Մէկ զուշ, որ գլխիս պտիտ է գալիս,
Թէ երբ մէկ խապար կը հասնի ինձ բարով,
Հոգոց հանելով ասում եմ լալիս:

«Նազըւ, իմ Նազըւ, անսման Նազըւ,
Սիրտս խորովի՝ անունդ յիշելով,
Նազըւ, իմ Նազըւ հրաշալի Նազըւ,
Աղասին քեզ տայ իր յետին բարով:

Սարերի դօշին, ձորերի միջին,
Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,
Երիտիցդ զրկւած, քո սիրով մաշւած՝
Տատրակի նման փշի վերայ նստած:

Նազըւ, իմ Նազըւ, մէկ շունչս է մնացել,
Ոսկերքս քրքրելի, աչքերս խաւարելի,

Թո՛ւ մէկ շունչդ առնեմ յետոյ հող մտնեմ,
Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կլինեմ:

Քեզ եմ մնում, քո ջանին մեռնեմ,
Հող ու գերեզման ես վրէս ունեմ,
Քանց իմ սառը մարմին էլ ի՞նչ գերեզման
Ինձի պէտք կուգայ, երեսիդ զուրբան:

Խ. Աբովեան

ԲՈՑԻԿՈՒ ՍԱՐԻՆ

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր.
Հողն է հեծեծում Բասենայ դաշտում.—
Ոսկի երգերդ, իմ ազիզ ընկեր,
Էն հողն է երգում Բասենայ դաշտում:

Ա՛յ սիրուն արտուտ լալազար գարնան,
Արագի դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Դուն թրոչում էիր սիրաբլի վան-վառման
Դովքն ազատութեան երգելով անսուշ:

Քաջ ընկերներով կռու սըլացար
Ազատ երգերով Արագի դաշտում.
Նամարդ թշնամուն զարկիր, զարկեցար
Ընկերներիդ հետ Բասենայ դաշտում:

Ու ժողովուրդը կարօտ քու սիրուն
Բասենայ դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Երգում են անվերջ երգերդ սիրուն,
Ու չեն մոռանում երգերդ անսուշ...

Ա՛խ, սուրբ վէրքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անսուշ քնեցիր.
Թո՛ղ ծանր չլժւայ այն հողը վըրէդ,
Որ այնպէս՝ հըզօր, անհուն սիրեցիր...

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր,
Հողն է հեծեծում Բասենայ դաշտում.
Անսուշ երգերդ, իմ ազիզ ընկեր,—
Էն հողն է երգում Բասենայ դաշտում...

Ա. Իսահակեան

ՈՉ ԵՂԲՈՅՐՔ ՈՉ...

Ո՛հ, եղբայրք, ո՛հ, օտարներէն չկայ յոյս,
Մի աչունիդ, մի դարձնէք յայս յայն կոյս,
Օտարն գձեղ թէև սիրէ հիւրաբար

Օտարն, ահ, միշտ է օտար:

Օտարը ձեր վիշտը կը դիտէ անգորով,
Ի՞նչ փոյթ թէ դուք թափէք արցունք արիւնով.
Ով որ հայ չէ, հայուն ցաւեր նա չի զգար,

Ի՞նչ կը խաբւիք անդատար:

Մի դուք ձեր յոյսը, մի աւանդէք օտարին,
Մի խոր վերքերնիդ ցուցունէք անգութին,
Արգահատմնս կը յուսանք. օգնութիւն,

Ձեզ կը ծաղրեն մերկութիւն:

Գիտեմ ձեր բեռը ծանր է, ծանր, ով հայեր
Բայց կը կարծէք զայն վերցնեն օտարներ,
Թողէք զօտար, տէք եղբայր եղբօր թև

Եւ զօրացէք անդերև:

Բաղդը դարձեր է ձեզի դէմ թշնամի,

Մի վհատիք. ցուցուցէք սիրտ հայեցի.

Ձէ կարող բաղդը յաղթել ազգին այն քաջի.

Որ բաղդին դէմ կը կուռի:

Ձեր հայրերուն՝ ո՛չ շղթայք ո՛չ սուսերներ

Ձը կարացին ընկճել ոչ միտք ոչ սրտեր

Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տկար, հէք,

Ի՞նչ, այն քաջաց որդիք չէք:

Ձէք դուք որդիք այն զիւցազանց աննման,

Որ հայրենեաց ճենճերեցան ի սեղան.

Ձէք դուք որդիք այն մեծ հայոց որոց կեանք

Են մարդկութեան իսկ պարծանք:

Դուք որ ունիք ձեր պատմութիւն մ'ազգային,

Որոյ վերայ մեծ ազգեր իսկ նախանձին,

Ինչո՞ւ այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց՝

Երանի տաք օտարաց:

Նար-բէյ

ԶԱՐԹԻՐ ՈՐԴԵՆԿ

Զարթիր որդեակ, ուշ բեր, վեր կաց,
Պատերազմի փողը հնչեց,

Զարթիր գոչեց ձայն հայրենեաց,
Կենաց մահու ժամ հնչեց:

Պատրաստել եմ քո զէնքը, քո սուրը,
Եւ քո գօտիդ ոսկեթել,

Եւ մի պսակ ոսկեփետուր

Երկինք կանխաւ պատրաստել:

Հաւաքել եմ քո զէնքերդ,

Ահա գլխիդ վերև կան,

Ինչպէս երբեմն քո գիրքերդ

Երբ կերթայիր վարժարան:

Մի՛թէ դու չես յիշեր երբոր՝

Դրիչ ու թուղթ տւի քեզ,

Փոխան դոցա ըսի մի օր,

Ուրիշ բան մ'ալ կուտամ քեզ:

Ահա փոխան գրչի քեզ սուր,

Փոխան թուղթի կուռ դաշտ,

Գնա՛ կուէ՛ դու քաջի պէս,

Ուրախացուր տրտմեալ ազգդ:

Ելիր կապեմ սուրը մէջքիդ

Ասպար կախեմ քո վզէդ,

Եւ մի դրօշակ ոսկեփետուր

Թող ծածանի աջ թևէդ:

Խրիման-Հայրիկ

ՊԱՐՉ ԳԻՇԵՐ

Մի գեղեցիկ պարզ գիշեր,

Երկինքը լի աստղերով,

Եւ լուսինը մեղմ փայլում էր,

Կաթնանման իւր լոյսով:

Նա նայում էր, լուիկ ֆնջիկ,
Իրրե մի կոյս դէպի Վան,
Նրա աչքին երևում էր,
Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քրդեր.
Առած սուր, թուր, հրացան,
Կոտորում են... կողոպտում են...
Աւերում են անտէր Վան...

Եւ կարծես թէ երկնքիցը
Ասում էր այդ լուռ վկան.
Վրայ հասիր հայ ազգասէր,
Ձեռքից գնաց Հայաստան:

Ս. Սաֆարեան

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր-Արաքսի ափերով
Քայլամուրր գնում եմ,
Հին-հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր չրով եղերքին
Դարի՛ւ դարի՛ւ խփելով
Փախչում էին լալագին:
— Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու ղեռ ծովը չի հասած
Սգաւոր ես ինձ նման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են,
Քու սէգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:
Մի պղտորիլ յատակը,
Հանդարտ հոսէ խայտալով,—

Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով:

Վարդի թփեր թո՛ղ բանին
Քո հիւրընկալ ափի մօտ.
Ոտխալները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ:

Մշտադալար ուռիներ,
Սառ ծոցի մէջ քո ջրին,
Ճկուն ոստն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քո վճիտ,
Ջուրը մա՛նեն միշտ արձակ:—

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով
Այսպէս խօսեց յատակից:

«Խիզ՛խ, անմիտ պատանի,
Ներհս ինչո՞ւ դարևոր,
Վրդովում ես նորոգում,
Իմ ցաւերս բիւրաւոր:

«Սիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին,
Ոտից գլուխ պճնւի
Իւր զարդերով թանկագին:

«Որի՞ համար զարդարւիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,—
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ...

«Կար ժամանակ, որ ես էլ՝
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պճրանքով,
Փախչում էի ափերէս:

«Յատակս պարզ ու վճիտ,
 Կոհակներս ոլորուն,
 Լուսաբերը մինչև ցայգ
 Ջրիս միջին էր լողում:
 Ի՞նչս մնաց այն օրից,
 Ո՞րը ջրամօտ դեղերս,
 Ո՞րը իմ շէն քաղաքից,
 Ո՞րը բերկրալի տեղերս:
 «Տուրքը ջրի ամեն օր
 Իր սուրբ ծոցէն Արարատ,
 Մայրախնամ ինձ սնունդ
 Պարգևում է լիառատ:
 «Բայց ես այն սուրբ ջրերով
 Սուրբ Յակոբի աղբիւրին,
 Պիտի ցօղեմ արտօրայքն,
 Իմ ատելի օտարին:
 Կամ կենսատու իմ ջրով,
 Ափերիս մօտ կըկզած,
 Իր նամազը կատարէ,
 Թիւրքը կամ պարսիկը հօտած:
 «Մինչ իմ որդիք,— ո՞վ դիտէ—
 Ծարաւ, նօթի, անտէրունջ,
 Օտար աշխարհ յածում են
 Թոյլ ոտքերով կիսաշունչ...
 «Հեռու հեռու քշեցին
 Բնիկ ազգն իմ հայկեան,
 Նորա տեղը ինձ տւին
 Ազգն անկրօն մոլեկան:
 Դոցն համար զարդարեմ,
 Իմ հիւրընկալ ափերը,
 Եւ կամ դոցա հրապուրեմ,
 Ճպոտտ պշլած աչերը:
 «Քանի որ իմ զաւակունք,
 Այսպէս կու մնան պանդուխտ,

Ինձ միշտ սգաւոր կը տեսնէք,
 Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»
 Եւ չխօսեց Արաքսը,
 Յորձանք տւեց անագին,
 Օղակ օղակ օձի պէս,
 Առաջ սողաց մոլեգին:

Գամառ-Քաթիպա

Բ Ա Ն Տ Ո Ւ Մ

Մարտի վերջերին աչքերս սառեց
 Զնդանի ծակից երկինք նայելով,
 Ասի, գուցէ մի խաբրիկ մ'առնեմ
 Կռունկներ կանցնին իրանց երամով,
 ...Եարձր Տէր-Աստուած ի՞նչ եղան արդեօք
 Ինչո՞ւ կռունկներ այս տարի չեկան,
 Գիշերով գնացին, որ ես չտեսնեմ,
 Թէ ուրիշ ճամբով թողին ու անցան...
 — Զան, ձայնիդ ղուրպան տեսայ քո ճամբան,
 Աստուած կ'սիրես դու հեռանց չերթաս,
 Այս մեր վերեւից անցու քո քարան
 Քեզ հարցունք մ'ունիմ ինձ ջուղար մ'տաս.
 «Դու բարով եկար, ռրտեղ մնացիր,—
 Ասա ինձ կռունկ ինչո՞ւ ուշացար
 Մի ջուղար մը տուր, ա՛խ սիրտս պատռաւ,
 Դէ՛հ ասա, կռունկ, արդեօք ի՞նչ տեսար:
 Դու կըարձրանաս ու կը ցածանաս,
 Հարաւից կուգաս կերթաս ի հիւսիս,
 Տարին երկ անգամ քո բոյն կգնես
 Նպատ, Անտօք, Սիս, Սիփան, Մասիս:
 Ինձ ընկերներ կան է՛ն լեռանց վրայ
 Արդեօք ի՞նչ կանեն, խաբրիկ մը չունիս,
 Տեսնը դու նրանց, լսի՛ր նրանց ձայն,
 Զուղար մը տուր ինձ, մատաղ քեզ հօգիս:

Ինչ մեծ յոյսերով ճամբայ ելայ ես,
Ինչ կար սրտիս մէջ ու ինչեր դարձաւ...
Ընկերներս ամեն չորս կողմ կը կռեն
Ես ընկայ զնդան, այս է իմ դառ ցաւ:

Ընկերներս ինձի ճամբու գրեցին,
Պատուէրներ տւին Տէրով ամանաթ,
Գրկեանք մէկ-մէկու համբուրինք զիրար,
Ողջ էին ամէնք ուրախ ու գլարթ:

Այժմ չեմ գիտեր, ողջ են թէ մեռած,
Ոչ մի լուր չառայ. հոմից հարցունեմ,
Ոտ ու ձեռս կապած գցել են զնդան,
Կոռնկ քեզանից դատ խարրքեր չոռնիմ:

Կսկիծ մտաւ սիրտս, թուլացան ոտներս,
Կոռնկ ջուղար մը առեր, ասա ինչ եղան,
Իմ հարիւրներով կտրիճ ընկերներս,
Կուռւմ յաղթեցին թէ ընկան մեռան:

Կոռնկ չխօսեց իր երամ քաշեց,
Թուա հեռացաւ աչքէս կորուսաւ,
Կտրեց իմ յոյսս, իմ բաժին թողեց,
Մութ զնդան, զնջիլ, սև դարտ ու սև ցաւ:

2. փ.

Վ Տ Ա Ր Ա Ն Դ Ի Ն

Թէպէտ վտար քաղքէ քաղաք կամ թափառ,
Բաղդն ու մարդիկ զիս հալածեն անգթաբար,
Այլ արգէն իսկ ազատութեան երբ վեհ ձայն
Թուա բերնէս՝ յանձն առի այս վիշտը համայն.

Ազատութեան ես անձնէր,

Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր:

Թէպէտ հեռի իմ սիրելեաց գրկերէն,
Հեռի նոցին քաղցրիկ ձայնէն, երգերէն,
Տխուր քնարս նոճիներէն վար կախած,
Լոկի ողբամ խեղճ ազգիս բաղդը մտահայց.

Ազատութեան ես անձնէր և այլն:

Թէպէտ յաչացս դառն հոսեն արտասուք,
Յայտնել սրտիս կարօտն ու սուգ և պասուք,
Այդ արտասուք սրտիս վէրքերը լւանան,
Վէրքեր, զորոնք ազգիս ցաւերն հոն բանան.

Ազատութեան ես անձնէր, և այլն:

Վտարանդի, թէպէտ դառն են այս օրեր,
Օր մ'ալ տեսնես նպատակիդ ես հասեր.

Ազատութեան յաղթանակը քու ձեռքիդ,

Վարդն ու շուշան պսակ պճնել գան ճակտիդ.

Ազատութեան ես անձնէր և այլն:

Մ. Փօրթուգալեան

Հ Ե Ր Ո Ս Ի Ն

Հերոս, դու անցար քո կեանքի ուղին,
Այժմ քո փառքը կապրի աշխարհում.
Կապրի քո վսեմ, անձնուրաց ոգին,
Սուրբ հայրենիքիդ հզօր երգերում.
Կապրի գործը—գործ հերոսական.
Որ ազատութիւն պարգևեց նրան:

Քանի որ ազգը շնչում է ազատ,
Կենդանի կը մնաս դու նրա կրծքում,
Դու ընկաւ... բայց քո արիւնն անարատ,
Կը հոսէ դարձեալ մեր երակներում,
Եւ քո գործերի փառահեղ թափին,
Միշտ ոյժ ու եռանդ կուտայ քո ազգին:

Կուի փոթորկում անունդ յիշելով,
Սարսափ կը ձգենք թշնամու սրտում,
Հերոսիդ մահը կերգեն մեծ փառքով,
Մեր մատաղ կոյսերն իրենց երգերում,
Եւ դու չես լսում երբէք լացի ձայն,—
Լացը կանարգէր քո սուրբ գերեզման:

Ա. Ծատուրեան



ԱՐԱՄԻ ԵՐԳԸ

Բանտիս դռներն էին եօթն ելքերով,
Շուրջն էր պատած ամուր երկաթ քարերով,
Ձեռս ոտըս շղթայ զարկին այս պահուն,
Վիճակումս այդպէս ընկաւ կախաղան:
— Պարան դրին պարանոցիս յետ քաշէք:

Գոչեց Արամ բարձրանալով կախաղան,
Ժամացոյցս ընծայ տարէք իմ հօրս,
Եւ մի ասէք Որամ կախեց, իմ մօրս:
Իմ անունս քաջ Որամ,

Մականունս Արամեան,
Խմբապետ եմ, խումբ կը կազմեմ,
Հայ ազգիս, հայ ազգիս:

ԿԻՈՒՆԿԻՆ

Բարով եկար սիրուն կռունկ,
Ի՞նչ լուր բերիր հայրենիքէս,
Խօսիր ինձ հետ ազատօրէն,
Կեանքս կ'նւիրեմ ես քեզ:

Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
Գեղեցիկ զարդարած գոյնը,
Նորա սիրուն տանջւում եմ,
Աչքերիցս կտրաւ քունը:

Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը:
Այն լեռներու պաշտպանողը,
Արծւի կորիւնի նետերը:

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,
Եղեմական դրախտավայր,
Նա կոչւում է Հայաստան:

— Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միջազ ի՞նչ կսպասես ի դուր,
Արի առնեմ իմ թևերուն.
Գնանք այնտեղ ուրախացուր:

ՀԱՅՐԵՆԵԱՅ ՍԻՐՈՎ

Հայրենեաց սիրով վառած վեհ սրտեր,
Ի՞նչ կը յապաղէք ելնել ի հանդէս.
Ի՞նչ կը յապաղէք, սիրտ կը դիմանա՞յ,
Սիրտ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ,
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ,
Եւ զեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ.
Խեռ ատելութեան և չար նախանձու
Սերմերն ու ոգին հեռու մղենք, հեռու,
Սիրտ սրտի կապած, թե թեի տաճ.
Հայրենեաց սիրոյ ապարէզը բացւած.
Օ՛հ, վազենք յառաջ, ի սուրբ խաչն վստահ,
Օ՛հ երթանք յառաջ, և անձնանէր,
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանէր:
Հայ, մի վհատիր, սիրտ ան և սիրտ տուր,
Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացւին, վատերը զատւին,
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին:
Խաչ, Սէրն են նշան ճշմարիտ Հայուն,
Խաչ Սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն:

Սիրոյ դրօշներ,
Թող արդ պարգւին.
Հաշտութեան ձայներ,
Թող արդ հնչւին:
Հայն մէկ սիրտ եղաւ,
Սիրով միացաւ.
Սուտ են որ կասն,
«Հայք զիրար կ'ատեն»:

Սուրբ արարատեան մայր աթոռոյն գիրկ-
եկէք, հայկազունք, եկէք միանանք.

Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտ,

Օրհնելով Տէրը, որ մեզ պարգեց,

Մեր Ազգին կայն ու հոգին,

Ազգային սահմանադրութիւն,

Յաւերժացի արդիւնաւէտ:

Ս. Փափազեան

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբայրք, մարդկութեան մէջը

Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.

Հայ անւամբ զմեզ կ'ողջունեն իրկինք.—

Եղբայրք, Հայ ապրինք:

Հայ ապրինք.—մեր հայրն է այն Իւրցադուն

Որ ազատութիւն սովորեցոյց մարդուն,

Ու մեզ վեհ անուն մը տաւ բաժին.—

Եղբայրք, Հայ ապրինք:

Մեր աշխարհն է սուրբ.—Մեր հողուն վրան,

Աստուած է քալեր, հանելով զԱզամ.

Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք.—

Եղբայրք, Հայ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին որբան,

Երկիր փրկութեան է մերս Հայաստան.

Կրօնից նախկին սեղանն է Մասիս.—

Եղբայրք, Հայ ապրինք:

Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր՝

Այլ և յեթեր մէջ շողայ լուսաւիր.

Քաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք.—

Եղբայրք, Հայ ապրինք:

Հայ ապրինք.—որ ազգ կայ Հայուն նման,

Որ ունենայ հին պարծանքներ անքան,

Ո՞ր ազգ Հայուն պէս շքեղ հայրենիք.—

Եղբայրք, Հայ ապրինք:

Նար-բէյ

ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ

Նպատակիս գէթ մի մասը կատարէր,

Եարալի բլբլուլ եմ:

Հայրենիքիս ազատութիւն տեսնեմ ու մեռնեմ.

Եար արի, տուն արի, շուտ արի բլբլուլ.

Սարերի գիւլն եմ:

Ա՛խ իմ դարտս շատացել է չեմ կարող,

Եարալի բլբլուլ եմ,

Դարտի ձեռքից որ ջուրն ընկնեմ ազատեմ,

Տուն արի, շուտ արի, եարալի բլբլուլն եմ,

Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, անբաղդ հայդուկիս Տէր իմ դու խղճայ,

Եարալի բլբլուլ եմ,

Մի թողնիր թիւրքի գնդակով զուր գնամ կորչեմ

Ենար արի, տուն արի, շուտ արի բլբլուլն եմ,

Սարերի գիւլն եմ:

ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Ծագեց արև ազատութեան,

Փախէք ամպեր երկնքից,

Համազասպը իր խմբովը,

Կուգայ Խաչէն գաւառից:

Գալիս էին բազմաթիւ զօրքով,

Ազիզեօզալ Բէգովը,

Յանկարծ ընկաւ Ասկերանը,

Հերոսների ուղկանը:

Թիւրք խուժանը սարսափահար

Փախչում էին, իսկ գլխիկոր,

Թողնելով իրանց ետեից,

Դիակները հարկւրաւոր:

Հայերիս տէր Իաշնակցութիւն,

Քաջեր ունիս սրտալի,

Ամբողջ աշխարհք հռչակեցաւ

Համազասպը պանծալի:

Ո՛ղջոյն ընդ քեզ Հայաստան,

Մեր դիւցազանց գերեզման,

Ողջոյն հայոց թագունի:

Պսակեալ փառօք հայրենի:

Երկինք ղրկէ քեզ հրեշտակ,

Բիւր վարդք ծլին ոտքիդ տակ,

Իւր մէկ նայւածքն երկնագեղ,

Քու արտասուացդ ըլլան դեղ:

Ո՛հ, ինչ անուշ նւագներ,

Պիտի հնչեն ոռխակներ,

Երբ քու ճակատդ պսակէ

Ծաղկէտնեան դափնիէ:

Մանուկն յօրրոց կը խայտայ.

Եւ ծերունուն սիրտ ցնծայ,

Երբոր նշոյլք կը ժպտին,

Հայ աստեղաց նորածին:

Ո՛հ, շիրմանցդ քով ալ հանգչի,

Անմահութեան վեհ ոգի,

Մինչ զւարթունք ի բարձանց,

Պսակս սփռեն հայկազեանց:

Փափուկ մատունք թող դրօշմեն,

Այն տառերով ոսկեղէն,

Մեր սրտին մէջ «սէր և լոյս».

Մեր հոգւոյն մէջ կեանք և յօյս:

Քու վշտերուդ փոխանակ

Երկինք կանգնեց յաղթանակ.

Քու վէրքերուդ ալ դարման՝

Քեզի օրէնք շնորհեցան:

Փափագեան



ՀԱՅ ԿԱՄԱԿՈՐԱՆԵՐԻ Բ. ԳՆԴԻ ԵՐԴՈՒՄԸ

ՏՈՒՐ ԶԵՌՔԻ ԵՂԵՍԵՐ

Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժելու,

Ժամ է՝ ժամ առաջ ոտքի ելնելու.

Հասել է արդէն, հայերուս օրհաս,

Լինել-չլինել՝ մեզնից է կախած...

Տուր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք,

Հերիք, ուրիշից օգնութիւն հայցենք,

Մենք ենք տանջւողը, մենք չարչարողը,

Մենք պիտի լինենք մեզի փրկողը...

Մեր վեհ հայրենիք դարերով ճնշւած,

Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկւած,

Պահանջէ մեզի արիւնով մաքրել,

Թշնամու արեամբ մեր դաշտ ու լեռներ...

Ըշտապիւր, եղբայր, առ ահա քեզ գէնք,

Սորանով միայն վերկելու ենք մենք,

Այս է գործածում մեր դէմ թշնամին,

Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:

Այնտեղ է քո կեանք, այնտեղ է քո մահ,
 ելիր ընդ առաջ, ելիր դու անահ,
 Արդարութիւնն է գործին նշանակ,
 Այնտեղ կը կանգնէ նա իւր յաղթանակ:
 Ըշտապիր, քանի դեռ չէ անագան...
 Քեզ կը հետևի ամբողջ Հայաստան
 Ազատութիւնն է գործի գրաւական,
 Այնտեղ կստանաս պսակ պատւական:

ԹՇԻԱՌ ՀԱՅՐԵՆԻՔ

Թշնառ հայրենիք, ո՞հ դու լաս հերիք
 Հոսես արտասունք քո հեղիկ, հեղիկ.
 Ո՛հ, թող հանդարտին հառաչանքդ ու լաց
 Թող լռէ տխուր Մուսայդ ողբասաց.
 Քօղդ առ մէկդի, թող աչքունքդ ժպտին
 Դէմ մայրակարօտ քո հայ պանդխտին
 Որ ձեռն ի ձակատ՝ մէջ օտար վայրեաց
 Կուլայ քո վսեմ փառքդ անմոռաց:

Հայրենիք, քո սիրտդ բացեցաւ ծաղիկ
 Քու շուրջդ ներկեց այգդ գեղեցիկ.
 Ե՛լ, ել արջնաթոյր արդ ամպոց տակէն
 Որ վեց դարեր է գլուխդ ծածկեն.
 Ե՛լ, ել ձեռքդ տուր, որդի քո եմ ես
 Տուր որ համբուրեմ, սիրով սրտակէզ,
 Եւ քեզ՝ սիրտ մ'ունիմ, տամ զանի յօժար
 Ձոր հայութիւն ինձ տաւ քեզ համար:

Յ. Մանուէլեան



ՍՐՈՒ ՓԱՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայոց երկրի աստղ ու լուսին,
 Պայծառ դէմքին քող են առել,
 Ի սէր Աստծու, գետեր, լճեր,
 Պղտոր արեան գոյն են դառել,
 Սուգ է երկինք, սուգ է երկիր,
 Ո՛հ, ի՞նչ ախուր փոփոխութիւն,
 Որովհետեւ ազգի պաշտպան
 Վեհ Սերոբ փաշան է մեռել:

Սերոբ փաշա ես քեզ մեռնեմ,
 Ինչո՞ւ որ թողուցիր քաջերուն,
 Ինչո՞ւ նորէն սուգ սփռեցիր,
 Դարտ վարամով լի հայերուն:
 Տասնուչորս քարի անընդհատ,
 Դիմադրեցիր թուրքերուն,
 Ձոհար բարձր դադափարին,
 Ինչպէ՞ս մոռանանք, Աստծու սիրուն:

Թող հայ կղերին Աստած պատժէ,
 Պատրիարքին փափը տիրէ՝
 Թէ որ քեզի մեծ ցոյցերով,
 Հոգեհանգիստ չը կատարէ,
 Դու բարձր ես շատ շատերէ,
 Հայ զինուորն անմխիթար է,
 Կռապաշտ և քարասիրտ է,
 Ով որ քեզի սրտով չի սիրէ:

Ո՛հ Աստած իմ, խղճա հային,
 Իսկապէս մեծ է աղէտը,
 Ձինուորները սգի մատնել,
 Չկայ մեծ զինուորապետը:
 Հազար ափսոս մեռաւ քաջը,
 Դիւցազնական որդին հետը,
 Եղբայրներն էլ իր վիճակին,
 Զնշաւ հոյակապ տան յետքը:

Սերոբն՝ արդար Սրբի պէս,
Կը բողոքէ պաղատանքով,
Մեր ճակատին պող կը բուսնի,
Կայենի պէս ամօթանքով:
Ի սէր Աստծու հայեր, հայեր,
Ոտքի ելնենք հզօր ջանքով,
Մեծ մարդու վրէժը լուծենք,
Անձնւէրի յաղթող զէնքով:

Փահրատ

ԶԱՐԹԻՐ ՍԻՐՏ ԻՄ

Զարթիր սիրտ իմ վշտահար,
Նոր առաւօտ քեզ ծագեաց,
Պարք մուգայից շուրջ գըւ,
Պահեն զգահոյսդ յարհաւրաց:
Պանծն դիւցազն մեծ արքայ փառօք,
Ճեմս յառեալ յերթս քո երգով,
Ո՛չ արև, ո՛չ լուսին, ո՛չ աստեղք, ո՛չ երկին,
Հասանեն քոյդ փառաց, յաւերժացիր:
Ուրախութեան տօն է այս.
Բերկրեալ սրտից դեռահաս,
Պարք մուգայից շուրջ գըւ,
Պահեն զգահոյսդ յարհաւրաց:

ԱԽՊՈՐ ԵՐԳԸ

Ալ ու ալեան ես հագել,
Կարմիր լալայ ես դառել,
Սուրայի կլոր մէջքդ
Փամփուշտներով ես ծածկել:
Ալ ու ալեան ես հագել,
Ախպէր ջան քեզ զուրպան,
Մեր գիւմանը դու ես դու:

Զեռքդ թւանք ես առել,
Դուշմանի դէմ ես կանգնել,
Ինձ ասն գլխիդ մատաղ
Բինիշդ ո՞վ է կարել:
Զեռքդ թւանք ես առել,
Ախպէր ջան քեզ զուրբան
Մեր գիւմանը դու ես դու:
Առիւծի պէս կանգնել ես,
Բեղերդ ոլորել ես,
Սև թուխ բեղերիդ մատաղ,
Յաղթանակը տարել ես.
Առիւծի պէս կանգնել ես,
Ախպէր ջան քեզ զուրբան
Մեր գիւմանը դու ես դու:
Սիրտս վրէժով լցիք,
Կրակով բորբոքեցիք,
Ազիզ քոյր ու աղբրտանք,
Ահա թուրս ուրեցէք.
Սիրտս վրէժով լցիք,
Ախպէր ջան քեզ զուրբան
Մեր գիւմանը դու ես դու:

ԹԷ ԻՄ ԱԼԵԻՈՐ...

Թէ իմ ալեուր հերքս սենային,
Ոյժս ինձ յետ դար, կտրիճ դառնայի,—
Նժոյգ ձի նստած, բեզս ոլորած,
Զեռս թուր առած ես դաշտ կերթայի.
Ես դաշտ կերթայի—դաշտ Աւարայրի,
Ողողած, ցողած հայոց արիւնով,
Ա՛զգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի:
Էասէ՛լ հայոց օրէորդներէն.

«Ծախեցէք հազի ձեր թանգ շորերը,
 Թողէք պաճուճանք, դարդ, մարգարիտներ —
 Ժանգոտած ու գուլ են մեր թրերը
 Տէքք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,
 Որ մենք փաթաթենք մեր մարնու վէրքը,
 Վիրակապ հիւսէք դուք ձեր մագերից —
 Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը»:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
 Մնտուկներս լի ոսկով, արծաթով,
 Շատերի նման ես չէի լինիլ
 Երբէք ազգասէր ունայն խօսքերով
 Շամպանեա գինու, Ա... Խ... տեղ՝
 Կառնէի առատ գնդակ ու վառօդ,
 Արձակ համարձակ կերթայի հանդէպ
 Հայատեաց ազգին անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
 Կուտայի զօրքիս սաստիկ հրաման,—
 Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
 Խղճուկ հայ ազգին լինել օգնական,
 Եւրոպ՝ Ասիա արեան գետերը
 Կը վազեցնէ հեղեղի նման,
 Մինչև որ թագ, գահ ու ազատ կըօն
 Ինձանից Հատանար թշուառ Հայաստան:

Բայց եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ
 Աստուած լինի մեր հողագնդին,
 Ինչ սուր սլաքներ պիտի շաղ տայի
 Մեր արենարբու թշնամեաց գնդին.
 Նենգ... թիւրք մոլի, պարսիկ ոխերիմ,
 Դարեւոր ոսոխ, դու յոյն կրօնամոլ,
 Դիտցի՛ք որ իմ սուր երկսայրի սրից
 Անմխաս չի մնալ ոչ մին ձեր որդին:
 Գամառ-Քաթիպա



Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու զարնան սիրուն թռչնակ,
 Դէպի հըր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ,
 Ա՛խ թռիւր, ծիծեռնակ. ծնած տեղս Աշտարակ,
 Անդ շինիր քո բոյնը, հայրենի կուռրի տակ:

Անդ հեռու արևոր, հայր. ունիմ սգաւոր,
 Որ միակ իւր որդուն սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նրան, ինձնից շատ բարեւ արա՛,
 Ասա թող նստի լայ, իւր անբաղդ որդուն վրայ,

Դու պատմէ՛ թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես
 Միշտ լալով, ողբալով կեանքս մաշել, եղել է կէս:

Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը.
 Գիշերը թաց աչքիս, քունը մօտ չի գալիս:

Ասիւր, որ չբացւած թառամեցայ մենացած,
 Ես ծաղիկ գեղեցիկ՝ հայրենի հողից զրկւած:

Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թռիւր արագ,
 Դէպ հայոց երկիրը, ծնած տեղս Աշտարակ:

Դողախեան

ԷՆ ԱՄՊԻ ՆԸՄԱՆ

Էն ամպի նրման խուլ որոտումով—
 Սիրտըս դարտով լի՛ կըռիւզ գընացի.
 Էն ամպի նրման ժէռուտ սարերով,
 Քուրբիկ ջան, բեզնէն հեռու գընացի...
 Է՛լ մի որոնիր քու ազիզ եարին
 Կըռէն յետ դարձող կտրիճների մէջ.
 Ա՛խ, մենակ փընտուր իմ քաջ սեուկին
 Անտէր խըրիւրնջող՝ լուռ դաշտերի մէջ...
 Է՛լ մի որոնիր քու ազիզ եարին
 Իմ ընկերները ուրախ խընջոյքում.

Բանձրիկ սարերէն ոռնացող քամին
Վրաս մի բուռ հող կը քրցէ դաշտում...

Ու օտար մէրեր ինձի տես կուգան,
Սև հողիս վերայ արցունք կը թափեն
Ա՛խ, օտար քուրեր ինձի տես կուգան
Ու վերաս անհւշ ծաղկունք կը թափեն...
Ա. Իսահակեան

ԽՕՄԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐ

Անխղճօրէն մեղ դատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ,
Նղբայրս ինձնից դատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ:
Իմ խնդիրիս չեն դնում ականջ,
Ասում են սուտ է քո պահանջ,
Ոյս հողերը ո՞նց էր առաջ,
Խօսիք Հայաստանի լեռներ:
Գուցէ յիշէք դուք այն օրը,
Որ պապս լծած արօրը,
Յանում էր դաշտ ու ձորը.
Խօսիք Հայաստանի լեռներ:
Գիտեն իմ պապիս անունը
Բայց ստում են ուղղութիւնը,
Դո՛նէ նրանց պատմութիւնը,
Խօսիք Հայաստանի լեռներ:
Հիմա ձեզ մնաց ամեն բան,
Պէտք է դուք գաք վկայութեան:
Ո՞ւմով էք կոչում Հայաստան.
Խօսիք Հայաստանի լեռներ:
Պայծառիս վիրաւորել են
Հողերին հաւասարել են,
Մեր կայքը օտարք տիրել են
Խօսիք Հայաստանի լեռներ,

ԴՈՒՔ ԻՆՉ ՉԱՅՆ ՄԻ ՏԱՔ

Դուք ինձ ձայն մի տաք, դեռ պիտի քնեմ,
Դեռ պիտի ննջեմ հանգիստ ու խաղաղ,
Մինչ այս քայքայւած խախտտ աշխարհը
Վերանորոգման դիմէ անյապաղ:

Յայնժամ պիտ զարթնիմ, այո՛, ես յայնժամ,
Երբ կուգայ Զատիկ, սուրբ Յարութեան,
Մեր տխուր երկիր դաժան ցրտերից
Կազատէ՝ տալով գարուն փրկութեան:

Իմ սգաւոր հոգին յայնժամ կը հրճւի՝
Երբ իմ հայրենեաց հովիտն ընդարձակ,
Երփներանգ ծաղկօք կը բացւի ազատ,
Մէջտեղը ծլած կապուտ մանուշակ:

Մի կողմից լսւի խոխոջ առակաց,
Միւսից թռչնոց մեղեդին քաղցրիկ,
Անուշ հովերի գուրգուրանքներով,
Ողջունեն իրար թփեր անմեղիկ:

Բացւի մեր երկրից բուք ու մառախուղ,
Ամպ, փոթորիկներ, մրրիկ ցրտաշունչ,
Նոցա տեղ գարնան անուշիկ հովեր
Մերձեալ հնչեն խաղաղ անմոռնչ:

Խայաթ

Յ Ո Յ Ս

Թող փչէ քամին պաղ, պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թո՛ղ գայ
Ո՛րքան որ կուզէ՝ թող փչէ հիւսիս,
Յուսով եմ վաղ-ուշ գարունը պիտի գայ:
Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թո՛ղ փակէ,
Տարերք աշխարհիս խառնւին իրար,
Յուսով եմ վաղ-ուշ արն պիտ ծագէ:

Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
 Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
 Մարտափելի չեն հային տառապանք —
 Միայն... չի հատնէր խղճուկի յոյսը:

Դամառ-Քաթիպա

ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳԸ

Տէր կեցո՛ղ դու զհայս,
 եւ արա զնոսա պայծառ

կեցո՛ղ զհայս:

Զողորմութիւնդ վերին
 Հաճեաց ձօնել նոցին,
 Զի նովիմք մարթասցին

Ապրիլ յաստիս:

Ո՛վ Տէր մեր, Տէր փութն,
 Զաղգ մեր համայն փրկեան

Ի թշնամեաց:

Կափո՛ղ զաչս նոցուն,
 Հատ զարմատոյն զբուն
 եւ զաղգ մեր պարտասուն
 Արան հզօր:

Ի քո իջեալ տեղի
 Զաթոռ Հայրապետի

Մեր հաստատեան,

Զերկարութիւն կենաց
 Հօր մեր աստուածազգեաց
 Շնորհեան պետին մեր հարց,

Որ զմեզ հովուէ:

Թաղիանոսեան

ԱՐԱՅՈՅԻ ԵՐԳԸ

Զարթէք, զարթէք ձեր Աստու սիրուն,
 Իմալ արուն գօլել թրուն,

Լոխպել անօրէն քրթերուն,
 Վարաղի ճանկ թաթով կիգայ:

Ձեր Աստու սիրուն, զէն իրիշկէք,
 Առէք զէնքեր, զրխեր հագէք,

Թոթվէք ձեռնի, սիրտը պագէք,
 Տեսէք ինչ խրվաթով կիգայ:

Ձգի մեռնիմ Սասնոյ ծներ,
 Էն ո՛րն ա կիգայ մըր լեռներ,

Քսան թուրքի գլօխ թեռներ —
 Դրած զառգաւաթով կիգայ:

Ախլախնձոր — տեփուր յերես,
 Դուշմանի կեանքը թորկեր է կէս,
 Նարինջ ձին տակ — ասլանի պէս,
 Խօրօտ — շախշիւթով կիգայ:

Սասնոյ վիշապ — աղնաւուր բէտ,
 Զար աչք քօռանայ՝ հտեանի խէթ,
 Ալիզըռանցի Լեռնի հետ,
 Արծւի զօլ զանատով կիգայ:

Արընով է սորվել լողը,
 Բարութով է կտրել դողը,
 Քրտի մահը թուրքին յաղթողը,
 Զէնքով, զառ զիննաթով կիգայ:

Մէկ հարցուցէք գալոյն ո՛րն է,
 Քաջ Արարօյ բախտաւորն է,
 Կարմիր Իրիցանց զինաւորն է,
 Առաքելսի — զարգով կիգայ:

Ոտքի կայնի կտրիճ Խէրան,
 Զօրքով գնայ յառաջ ուրան,
 Սալաթ Մէհրին բաժին զուրբան,
 Արարօս զովաթով կիգայ:



Արարօյիս բաժնի բողոն.
Բարութ գուլէն ուր բնադուն,
Կը թափայ ձըր վախկոտ արուն,
Հայ անարատ կաթով կիգայ:

Յահրատ

ՍԱՔՕՅԻ ԵՐԳԸ

Այն օրը որ ես քեզ տեսայ,
Հոգւոյս բարեկամ ընտրեցի,
Քո պատճառով շատ սիրեցի,
Որտեղ տեսայ Սև—Քարեցի,
Սև—քարիդ ղուրբան Սաքօ ջան,
Սաքօ ջան հայ Սաքօ ջան վայ,
Սաքօ ջան, ջան, աղբէր ջան:
Բորիկ ոտքով ուխտ գնացի,
Փառք Աստծու, մուրազիդ հասայ,
Ա՛խ, ի՞նչ երջանիկ օր էր որ—
Քեզ սկզբում Դերիկ տեսայ,
Դերիկիդ ղուրբան Սաքօ ջան և այլն:
Հարց արեցի վարդապետին,
Ասի, ռրտից է այդ արեղան,
Ասաւ, արեղայ չէ, հոգիս,
Զինուոր է այդ սիրուն տղա
Զինուորիդ ղուրբան և այլն:
Պատարագից վերջ՝ հրացան,
Գնացինք զարկելու նշան,
Հայր թաւաքալ, Պետօ, Կարօ,
Ի՛նչ սիրելի՞ ընկերներ կան.
Ընկերիդ ղուրբան և այլն:
Գործը այսպէս էր պահանջում,
Քեզ ճամբեցին զէնքից զրկւած,
Հազարներու դէմ դնող մարդ,
Դնգլի մի յիմար քիւրտ է բռնած.

Վանայ խրոխտ բերդի փոխան,
Մշոյ խարխուլ բանտն են դրած.
Հսել մայրիկդ լալիս է,

Մայրիկիդ ղուրբան և այլն:
Երկար յաղթութիւններից վերջ,
Այժմ էլ տանջանքին դիմացիր,
Անյաղթ ջանփետայ լինելու,
Մեծ մարդ կոչմանն արժանացիր,
Այդ դէպքում էլ պատմութեան մէջ,
Անյաղթ տոկուն փառքն ստացիր,
Անյաղթիդ ղուրբան և այլն:

Լ. Ռ. Ե. Յ.

Լոկց: Ամպերը եկան ծածկեցին
Երկիրնքն, ու լուսինն աչքէս խեցին.
Մնացի մենակ՝ հոգիս վրդոված,
Զեռներս ծոցիս գլուխս քաշ արած,
Եւ այնուհետեւ ամեն իրիկուն.
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշառ վիճակը ազգիս:
Ա՛խ ցոլն, փայլէ տխրադէմ լուսին,
Գուցէ քո փայլից փայլ տաս և հային,
Պատմէ շատերուն Վտրդանի մահը,
Կամ՝ ի՞նչպէս կորաւ հայ ազգի զահը,
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը—աշխարհը Հայաստան:
Դամառ-Փաթիպա



Ի՞նչ ԱՆԵՆՔ

«Ի՞նչ անենք»... Ամօթ այսպէս ասողին,
 Ամօթ, բիւր ամօթ յուսահատողին,
 Մահ, մահ, հազար մահ հէզ վհատողին...
 Եղբարք, ալ չասենք, «հայեր, ի՞նչ անենք»:
 Ասէք՝ ի՞նչ կ'անէ ջուրը ընկածը,
 Ասէք՝ ի՞նչ կ'անէ քաղցած սովածը,
 Ասէք՝ ի՞նչ կ'անէ գերի ընկածը...
 Եղբարք, ալ չասենք. «հայեր ի՞նչ անենք»:
 Զրամոյնք ճգնին՝ քանի ոյժ ունին,
 Քաղցածը մաշէ շեմքը դրացիին.
 Փախչել կհնարի կաշկանդւած գերին...
 Եղբարք ալ չասենք. «հայեր ի՞նչ անենք»:
 Հարուստ, հէ՛ր ոսկիդ սնդուկը դրել ես,
 Կտրիճ, հր օրւայ ոյժդ պահել ես,
 Առ ի՞նչ, ազգասէր, ազգդ սիրել ես...
 Եղբարք ալ չասենք. «հայեր, ի՞նչ անենք»:
 Հարուստ, դիմացդ է ազնիւ ասպարէզ,
 Հայրենիք լաւ է քան թէ ոսկու դէզ,
 Թէ մեռնիս՝ ոսկիդ հետդ կտանես...
 Եղբարք, ալ չասենք. «հայեր ի՞նչ անենք»:
 Կտրիճ, ալ կանցնի մի քանի տարի,
 Այդ թշիւ վարդը իսպառ կը խամրի.
 Զի թոռմիր միայն յիշատակ բարի...
 Եղբարք ալ չասենք, «հայեր ի՞նչ անենք»:
 Թէ ուղէ հայր շատ բաներ կանէ,
 Եղբարք, ալ չասենք. «հայեր, ի՞նչ անենք»:
 Հայր կստիպէ վեհ Պատրիարքին
 Յորդորակ սփռել բոլոր հայ ազգին,
 Թոթել-զարթեցնել մեր թմրած հոգին...
 Եղբարք, ալ չասենք, «հայեր, ի՞նչ անենք»:

Գամառ-Քաթիպա

ՀԱՊԱՔԱԶԱՅՈՒՆՔ

Հապա քաջագունք, հայոց դաւակունք,
 Առէք աղեղունք ի մահ՝ երազունք,
 Սնտառը սպասեն, կենդանիք սարսեն,
 Զինուց ի ձայնէն կենդանիք սարսեն.

Շեշտակի նետեր

Թափեցէք, քաջեր,

Յրէս անվեհեր:

Վաղենք ուր վտանգ՝ այս մեր զօռանք,
 Որսոց արշաւանք՝ մարտից են կըթանք.
 Երթանք գունդ ի գունդ՝ յաղեղ և մկունդ,
 Յուսով սրտաթունդ՝ յաղեղ և մկունդ:

Շամբրենք զկենդանիս

Իբր թշնամիս

Ի մեր հայրենիս:

Զի օր մ'ալ նոյնպէս մարտին ի հանդէս
 Զարնենք մահազգեսց զոտոխ հայրենեաց.
 Եւ յաղթանակաւ լցեալ աւարաւ,
 Դառնանք քաջարշաւ լցեալ աւարաւ,

Եւ ի մեր դափնիք

Ծափ տան սիրելիք

Պանծայ հայրենիք:

ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիք զիս կը կանչէ,
 Հեռու եմ Հայաստանէն.
 Հայու որդւոյն կը վայելէ
 Հեռանալ Հայաստանէն:

Միթէ արծաթ, ոսկի գոհար
 Կը սփռի՞ Հայաստանը

Այն որ կողբայ որդւոց համար՝
Խղճալի Հայաստանը:

Խոր տխրութեան մէջ է թաղեր
Թագուհի Հայաստանը,
Բոբիկ ոտքով, արձակ մագով
Կարտասուէ Հայաստանը:

Անգութ երկինք ալ չի յիշեր,
Մոռացեր է Հայաստանը:
Անսիրտ հայերն ալ չեն յիշեր
Անուշիկ Հայաստանը:

Ո՛հ թողէք զիս խօսեմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը,
Անուշ երկիր, կոյս անարատ,
Աննման Հայաստանը:

Արև ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը,
Հայոց արևն ալ մարեր է,
Սև հագեր Հայաստանը:

Թշառ սրտիս ձայն կը կտրի,
Ողբալով Հայաստանը,
Ո՛հ, չկայ հայ որ սփոփէ
Նւաղեալ Հայաստանը:

Մինչև կտրի իմ վերջին շունչս,
Պիտի կանչեմ Հայաստանը,
Պըլւիմ մէյ մ' հայրենեացս,
Հապա մտնեմ գերեզմանը:

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին,
Կտրել այս ձայնս չէ, չէ կարող
Սոսկումն գերեզմանին:

Հ. Հայկունի

ԵՐԳ ՄԱՐՏԻ

Մնացես բարեաւ սէր իմ սէր,
Հրաւէր մարտին որոտաց,
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զկայ բաժին ինձ փառաց:

Մի լար, հոգւոյս իմ հատոր,
Փուցէ դառնամ, ո՛հ մի լար,
Թ'անկայց մարտին ես ի գող,
Տեսցուք յերկինս մենք զիրար:

Եղբայրագաւ չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի,
Ի սուրբ հողոյ հայրենեաց
Բառնամ զլուծ օտարի:

ՆԱԶԷԻ ՕՐՕՐԸ

Քնիր իմ բալիկ, օրօր, իշ արն,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:
Կոյր կռուները սուգ ու շիւանով
Մեր սև երկնքից եկան, անցկացան,
Ա՛խ մեր լեռներում նրանք կուրացան,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:
Հողմն է հեծեծում սև անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալիկ,
Անտէր ու անթաղ մեռելները շատ,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:
Կարաւանն անցաւ, բարձած արցունքով
Սև տնապատում ծունկ չոքած մնաց,
Այն մեր աշխարհի գարգ ու զուլումն է,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:
Յուլունք եմ կապել օրօցքիդ,
Զար աչքերի դէմ, մեր չար դիւշմանի,

Քնիր ու աճիր, շուտ արա, բալիկ,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:
Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց
Գիտեմ այն դառն է չես ուզում, բալիկ,
Ա՛խ վշտիս թոյնն է քամել նրա մէջ,
Դու լաց մի լինիր, ես շատ լացել:

Կաթիս հետ մէկտեղ սև վիշտն ծծիր,
Հոգուդ մէջ թող նա սև վրէժ դառնայ,
Ծլիր բոյ քաշիր, բոյ՜իդ ես ղուրբան,
Եւ լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

Ա. Ահարոնեան

ԱՐԻՔ ՀԱՅԿԱԳՈՐԾԻՆՔ

Արիք հայկազունք, առաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարե մ'ալ տանք,
Որ ազգ երբ զանի փրկարար կոչեց,
Նոր հովի նոր կեանք անոր պարգևեց,
Եկէք, բարեկամք լաւ բարձրեան Աստուած
Ուղղեմք մեր մաղթանք սուրբ սրտէ բլխած,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու սահմանադրութիւն:

Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն ի դուռ հայոց ազգութեան,
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է, մեզ,

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,

Ազգ ու Սահմանադրութիւն:

Զնչեց ամենայն կարծիք անձնական,
Խեղճեց ամենայն ձայն անհատական,
Հրաւէր կարգաց Աստուծոյ ձայնին,

Առաջնորդ լինիլ գերծոց ազգային:

Այն որ Աստուծոյ ձայն տաւ մեզի,

Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,

Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայերս անարգեմ զրկեց բարձրացուց,

Մարդկային կոչման մեղ արժանացուց,

Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած

Մարդկութեան երկկորդ նշանն է դրած,

Որուն հնորհա արդ ստացանք մենք,

Անոր յարգ տարով արդիւնք ու երգենք.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ են:

Դուն ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,

Ալ աշուհեան մի ազար լիւիկ:

Զի ալ քու որդիք նոր ոգով բերկրեալ,

Զքեզ հալու կուզեն տեսնել զարդարեալ,

Ալ մի լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,

Եւ ձայնիս քաքցրիկ որդեցդ հետ երգէ,

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ, են:

Հայեր միանանք մեր մօր հետ օրհներ,

Զանոնք որ մեզի տուն սուրբ օրհներ.

Սահմանադրութեան բարեաց փոխանակ

Թող վարեն ուրախ ի կեանք փառունակ:

Թող և մեր որդիք հետ անոնց տուն

Բիրաւոր տարիք օրհներ ու կարգան.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ են:

Ա. Սվաճեան

ԱՇՈՏ ԹԱԹՈՒԼԻ ԵՐԳԸ

Ելզը քէօջից հրաման —

Տեղս գահին սուլթանը,

Մնաք բարե ազնիւ ընկերներ,

Շօտ է կեանքիս վախճանը:

Կարմրագոյն պատանքս,

Բանտի պատէն մխել են,

Դիւապաշտի անգութ ֆէրմանը,

Գլխիս վերե կախել են:

Պահանջում են թրքանալ,

Կեանքը գնել մատնելով,

Ապրել այս գառն աշխարհում ստոր,

Ազգի գաղտնիք պատմելով:

Ես պաշտել եմ գաղափար,

Ուխտել եմ զոհել ազգիս,

Կախաղանի անգութ սարսափով,

Ձեռն ծախել իմ սուրբ հոգիս:

Արե լուսնի կարօտով,

Երկար տարու տանջանքին,

Կախաղանը վերջ կտայ շուտով,

Էրեւո՞՞ վառւած իմ կեանքին:

Թող չը թաղէ ինձ թիւրքը,

Թողնի հողի երեսը,

Թող կատարէ իւր անգութ, տմարդի

Գազանային հանդէսը:

Բայց դուք անուշ ընկերներ,

Ձեր սրտին մէջ գերեզման,

Թաղէք ձեր հէգ Թաթուլին լացով,

Մահս յիշէք մշտական:

Յայտարարէք Դրօշակին,

Կենսագրութիւնս անարատ,

Ազգ ուրացողներին թող լինի,

Ազնիւ մահս սուրբ խրատ:

ԱՆՆ ՄԵՐ ՄԻՐՏԸ

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարտ, ցաւ,
Օր ու արե չը տեսանք.

Վախ, մեր կեանքը սեռով անցաւ,

Աշխարհից բան չ'իմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն խմեն

Աշխարհի ձոխ սեղանից.

Մենք աշխարհի խորթ տղերքն ենք,

Մեզ փայ չկայ աշխարհից:

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ

Քարից-հողից հաց քամէ.

Բեռով հացը հարբատին տայ,—

Հարուստն իշխէ, վայելէ:

Խեղճ աղքատը դուր գատի—

Դատարկ նըստի... Էյ, աշխարհ,

Էլ ինչու ես քարը թողնում

Քարի վըրայ, քար-աշխարհ:

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարտ, ցաւ,

Օր ու արե չը տեսանք.

Վախ, մեր կեանքը սեռով անցաւ,

Աշխարհից բան չ'իմացանք:

Աւ. Իսահակեան

ԵՐԲ ԱԼԵԿՈՐ

Երբ ալեկո՞ծ ծովի վրայ,

Իմ մակոյկս խորտակւի.

Ես փրփրաղէզ ալեաց մէջը,

Դեռ իմ յոյսը չեմ կտրեր:

Բոլոր ոյժով ե համարձակ

Բազուկներս կը շարժեմ,

Ալիքները պատառելով

Դէպի ափը կը թռչեմ:

Անհաւապար ալի կտի մէջ,
Թէ ոյժերս ինձ թողնեն,

Աւերները յորձանք տալով
Դէպի անգունդ ինձ նետեն:

Այն ժամանակ գէթ սիրտփափար,
Ես կը գտնեմ նորա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կտիւ տալով մինչև վերջ:

ՏԱԼՎՈՐԻԿԻ ՉԱԽԱԿ

Տալվորիկի զաւակ եմ դորդ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ,
Սարի զաւակ, քարի ուղի,
Հին քաջ հայոց եմ ֆառցորդ:

Տալվորիկի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիւր թիւրքին տառջ,
Քարոտ լերան եմ ազատ լաճ,
Չեմ տեսել ոչ արօր, ոչ մաճ:

Հայ աղբրտիւր, վայ աղբրտիւր,
Տալվորիկի զաւակն եմ քաջ,
Ազատութեան սիրտն համար,
Եկէք դէպ ինձ յառանջ, յառանջ:

Երբ իմ աչքերս բացի աշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար,
Երես չփակեմ աչքս ի խաւար,
Պիտ չկոխէ հոս ոտք օտար:

Իմ մամ ծնաւ զիս սարերու ծոց,
Ընկոյզի կոճղ մ'ինձ օրօրոց,
Տկող ծնայ, մեծայ տկող,
Կեանքիս բաժինն է կտիւ ու բոց:

Հայ աղբրտիւր, վայ աղբրտիւր, ե այլն:
Ոտքս բորիկ կուրծքս միշտ բաց,
Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ ֆառց,

Ինձ մօտ մէկ է արեւ բուր, ցուրտ,
Բաւ է չիշխէ հոս թիւրք կամ քիւրդ,
Իմ կեանքս է խիստ և էլ չարքաշ,
Փափուկ կեանքի բնաւ չեմ վարժ,
Բնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մորիկ ու երկրաշարժ:

Հայ աղբրտիւր, վայ աղբրտիւր, ե այլն:
Հարստութիւն, ուսում, հանձար,
Փառք ու պատիւ չեն ինձ համար,
Բաւ է ունիմ տէգ, թուր, խանչալ,
Բնաւ չխրոխտար միտս օտար:

Սիրած զէնքերս չեմ ձգեք ձեռքէս,
Առիւծն անվախ չէ ինձի պէս,
Կը սիրեմ որս, կտիւ, աւար,
Կը սպասեմ երբ ընկնի հաւար:

Հայ աղբրտիւր, վայ աղբրտիւր, ե այլն:
Այժեմի պէս կը ցատկոտեմ,
Առիւծի պէս կը մոնչեմ,
Ծովի նման կը փռփռեմ,
Կայծակի պէս կը հարւածեմ:

Կուտ դաշտը բաղդն է կեանքին,
Երբ կը ծագի արշալոյսը:

Կամ անկտիս անայ դրօշակին,
Կամ պաղ տեսնէ քու երեսը
Հայ աղբրտիւր, վայ աղբրտիւր, ե այլն:

ԱՀԱՆԱՅՐ ԻՄ

Ահա մայր իմ ես գնում եմ
Ազգիս համար կուեկու,
Քաջ ընկերներովս միասին,
Անգութ թիւրքին ջարդելու:

Ահա քոյր իմ ես գնում եմ,
Նպատակրս է բարի,

Ձենք գիմանայ մենք գերի ենք,
Իբր վեց հարիւր տարի:

Ահա հայր իմ ես գնում եմ.

Մնաս բարեաւ դու հիմայ,
Այսքան ճնշման տակը բնկած
Հայը թնշպէս գիմանայ:

Իմ սիրելիս ես գնում եմ,

Թող քո արցունք չ'հոսէ,
Պատերազմի դաշտի վերայ,
Ընկերս ինձի կսպասէ:

Թէ ողջ մնամ յետ կղանամ,
Կփաքատեմ ձեր վշտեր,
Իսկ թէ մեռնիմ, շատ մի սգաք,
Օր մը գուցէ կուգաք տես:

Գերեզմանիս հողին վրայ

Թափէք արցունք, ով մայրիկ,
Թափէք արցունք, ցանէք ծաղիկ,
Երիտասարդ եմ մայրիկ...

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ՝
Օգնութեան հասէք Հայկայ զաւակներ,
Վասնզր մեծ է, չկայ մի օգնող,
Տանջող մեռնողին մի ձեռք կարկառող:

Նա դաւաճան է իր հայրենիքին,
Ով օգնել չի ուզի ճիշտ ժամանակին:
Հարաւ ու հիւսիս շատ թափառեցինք,
Պապական տանն էլ հեռքը կորուցինք:

Չար թշնամիք, միշտ ահաբեկիչ,
Թոյն են սերմանել մեր մէջ վարակիչ,
Բաւ է բաւ, հայեր օտարք մեզ խաբեն,
Եւ մեր արիւնով իրենք աշխատին:

Կուր տապալէզը բաց է մեզ ահա,
Ջարգում փշրում են իրար անխնայ,
Հինեւ-չլինելու րոպէն է հասել,
Անտարքեր մնալ հային չի վայել:

Թէ ԻՄՍ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Թէ իմա հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրազին՝ իմ հոգին է այն.

Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր,
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն:

Թէ հայ մոռային սրտառուչ նւագ,
Եւս կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն.

Թէ Հայաստանի սե բողոքին հագագ,
Էայ աղեկաւոր՝ հեծեծանքս է այն:

Թէ իմ հայրենեաց կիսամեռիկ շունչ,
Իեռ լաւի տխուր՝ իմ ողբերս է այն.

Թէ լսիկ մեջիկ հեծէ անշունչ,
Ո՛հ անկարեկիր իմ լալիքս է այն:

Եւ Հայկայ փռոտաց յօժար ողբերգուն,
Հարագատ լացողն իմ ձայնիկս է այն.

Չորս հազար տարւան պարծանաց գարուն,
Թրձագանք տուոյն՝ աղաղակս է այն:

Ի մ Հայաստանիս ցաւերուն հատոր,
Ահա այս մաշւած իմ կուրծքս է այն,

Յե սե թերթերուն էջ սրտակոտոր,
Արտասուք գրւած, իմ աղիքս է այն:

Թէ բանաս կարդաս արեւնոտ դաշտեր,
Վարդագոյն ներկւած՝ իմ կողբս է այն:

Թէ աչքէ անցընես շամփրած նիզակներ,
Մահահոտ ցնցւած՝ իմ թիկունքս է այն:

Թէ Հայկ եւ Արամ, Վարդան, Վահաններ,
Բնկած տեսանես՝ իմ ոյժս է այն.

Թէ զէնք, Թէ զրահ, Թէ սուր, Թէ սուսեր,
Փշրած կտորած՝ ոսկորներս է այն:

Թէ արեամբ ներկեն ալեւոր եղեմին,
Նշխար քաջերուն իմ բերելս է այն:
Թէ քաղցր ու անրիժ ալիք եփրատին
Լեզի են դարձեր՝ արտասուքս է այն:

Թէ վճիռ գետերն, աղբերքն արծաթի,
Լալիք առակեն՝ հրակներս է այն:

Թէ Տիգրիս, Գեհամ, Փիսան մանչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն:

Թէ սառնամանիք ձմրան բքաբեր,
Լեռներն է պատեր, իմ դաժախ է այն:

Եւ քաղցրիկ գեփիւռն անուշիկ հովեր,
Ցրտագին փչին, իմ շնչիկս է այն:

Թէ վտակ, վտակ ցօղէ գլխատակ,
Չայս տրտմամասակ՝ աչքերս է այն:

Թէ սրտածայնիկ երգէ գէտաստան,
Կանչէ զհայաստան՝ անկեղծ սերս է այն:

Թէ մթին խորշերն ու ձորեր լռեն,
Սևերով ծածկեն, մենաստանս է այն:

Թէ ոգը կը կարգան վայրերն եղեմին,
Ծնշած լերդերուս արծազանքն է այն:

Եւ հայաստանիս հողերը ուխտիս,
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն:

Թէ համբուրեն կաթնաղբն խնդիւ՝
Ո՛հ մայրակարօտ շրթունքներս է այն:

Եւ հայոց լեռանց ցուրտ շուքերուն տակ,
Ընկած ապարաղղ՝ իմ ճակատս է այն:

Մասկաց սուրբ քարերն իւր բարձն ու պսակ,
Դրած սգաւոր՝ գլուխիկս է այն:

Եւ կիսախորժան առճարն հայրենի,
Սև սուգ է պատեր՝ տաղաւարս է այն:

Ուր շիջելավառ կանթեղ գետ հիւծէ,
Նւաղ առ նւաղ՝ իմ յոյսս է այն:

Ուր տխուր նստեր, մագերն են ծածկեր,
Իւր սևուկ աչքեր սիրականս է այն:

Ձեռքերն ի ճակատ, կոնակն ի հողեր,
Յուսով կոթներ՝ հայաստանս է այն:

Ու երբ տեսնեն զիմ հէգն հայաստան,
Ի մէջ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն:

Յայնժամ թնդ մեռնիմ յիւր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն:

Ս. Լ. Յէլիկեան

Ծ Ո Վ Ա Կ

Չայն տուր, ով ծովակ լինչու լուռս ես,
Ողբակից լինել չկամիս դժբաղդիս:

Շարժեցէք զեփիւռ ալիքը վեա-վեա,
Պառնեցէք արտազունք այս ջրերի հետ:

Հայաստանի մէջ անձքերին վկայ,
Սկզբից մինչև ցարդ խնդրեմ ինձ ասն:

Միթէ միշտ այսպէս կը ֆառ հայաստան,
Փշալից անապատ, երբեմն բուրաստան:

Միթէ միշտ այսպէս ազգս խղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի,

Միթէ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է հայ և հայի որդին:

Արդեօք գաղթ է մի օր ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի զրօշակ,

Եւ ամեն կողմից պանդուխտ հայ ազգը,
Դիմէ դէպ՝ իւրեանց սիրուն հայրենիք:

Դժւար այդ, միայն Տեսուչ գլխին,
Կենդանացրու հայութեան հողին,

Ծագիր նոցա դու, քո լոյս գիտութիւն,
Որով իւր էակ նոքա բանական,

Կը լինին գործքով Տիրոջ փառարան:

ԳՆԱՆ ԲԼԹՈՒԼ

Գնան բլրուլ մեր աշխարհից,
Դու էլ այստեղ մի երգիր,
Մեր օրը սև, մեր կեանք դառը
Ծաւերդ այստեղ մի երգիր:

Տանջւած սիրտս՝ քո անուշիկ
Երգից յուզուած խոցոտուում,
Սրտիս վիշաք քո երգերից՝
Գրգուում է խորանում:

Գնան բլրուլ մեր աշխարհից,
Գնա երգիր այլ երկրում,
Ասա այնտեղ, որ մեր վարդից՝
Արեան թարմ հոտ է բուրում:

Որ ողբաձայն մրմնջացող
Վտակների հոսանքին,
Գոյանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեգին...



Յ Ա. Ն. Կ

Աւետիք հայրենեաց. Տամ քեզ աւետիք 3
Հայդուկի վերջին ուխտը 3
Ես կուգեմ կուել. Հերիք է մայրիկ 4
Արիք եղբայրք միանանք 5
Բաւ է եղբայրք վիզը ճկել 5
Ահա մայրիկ ես գնում եմ 6
Ազատութեան այն վառ սէրը 7
Կուեցէք տղերք, կուեցէք քաջ քաջ 8
Մեր հայրենիք թշուառ անտէր 9
Ձեր ճամբին մատաղ կարիճ եղբայրներ 10
Գտի տղայ չեմ օրօրի օրօրանքդ 11
Ի ղէն հայեր ի սուր ե ի հրացան 12
Ջինւած պատրաստուած Ջէյթուսի քաջեր 12
Հայդուկի երգերից. Կովկասի քաջեր 13
Հերիք որդեակք այսքան տարւայ 14
Սաղազ դաշտի որդիք 15
Հայրենեաց սիրոյ համար 16
Իբրեւ արծիւ սուտառնում ես 17
Ագնիւ ընկեր մեռանում եմ 18
Մեր նահատակներին. Սաղազութիւն ձեզ 19
Վիրաւոր ընկերոջս. Վիրաւոր ընկեր 19
Հայդուկի երգերից 20
Ազատն Աստուած այն օրից 21
Հայդուկներ Վանի ծովի վրայ 22
Մենք պէտք է կուենք 24
Մշեցու հեկեկանքը 25
Ջոկեցի անհատ քաջերը 26

Յուսահատել մեղք է ընկեր	26
Ոչ փող զարկինք, ոչ արձագանք	27
Սև մութ ամպեր ճակտիդ դիզան	28
Հայդուկի երգերից. ես գնում եմ	28
Նւէր հայդուկին. Անոյշաբոյր թարմ ծաղիկներ	29
Թիկունքդ լայն. թևերդ ոյժգին	30
Թիփի բորան մութ գիշերին	30
Հայրենիքիս վառ երազով	31
Ով որ քաջ է ինչ կապակ	32
Ջախող օրերը ձմռան նման	33
Դու զով խնդրես մայր իմ անուշ	34
Ես երգեցի մի երգ յուզւած	35
Մասիսի ճակատին	36
Հերոսին. Դու անցար	36
Այսքան տարի դու ննջեցիր	37
Լուսին չկար մութ գիշեր էր	38
Ուրեմն մնաք բարով	38
Մայիս ամսույ դու զնվիրուի	39
Կէրքերով լի ջան ֆիտայ եմ	40
Անթիւ դարեր թափառեցինք	41
Սուրբ հայրենիքս երգել կուզէի	42
Հայրենիք սրբազան իմ սիրուն աշխարհ	42
Օխտը տարով, օխտը սարով	43
Զէյթուն անկախ դու աշխարհի	43
Հարազետ լինինք հայեր	44
Որսկան ախպէր, սարէն կուզաս	45
Նպատակիս հասնիմ միայն	45
Գլխավոր ջուր է իջնում	46
Հայդուկի երգերից. ես ընկել եմ քիւրտերի մէջ	47
Իմ իզն. Սիրտս ուրախ կեանքս	48
Է՛յ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես	49
Հագիւ լրացաւ քսան մէկ տարիս	50
Մենք անկեղծ զինուոր ենք	51
Ինձ համար չէ զարնան դալը	51

Բնականների գու վաշտերը կատաղի	52
Պարզիր աղբիւր, պարզիր քեզին	54
Աղօթարանը բացւեցաւ	54
Հայդուկի նշանածի երգը	55
Մայրիկ ջան, միաս բարով	56
Զինուորների երգը. Թուր իմ նմոյց	57
Կարկուտ տեղաց	58
Գարահիսար լեռան կրճէրին	59
Բարով ես եկել ծիծեռնակ սիրուն	59
Եղբայրս թուրքի բանտում	60
Հիմի էլ լսենք	61
Մեծ գաղափարականին	62
Անուամ սիրէք հայ աղջիկներ	63
Հայաստանի աւետարներ	64
Մի նոր հրաշալի	65
Սար ու ձոր ընկած	66
Բոցիկու սարին սև ամպն է շքեր	67
Ոչ եղբայրք ոչ	68
Զարթիր որդեակ ուշ բեր	69
Մի գեղեցիկ պարզ գիշեր	69
Մայր Արաքսի ափերով	70
Բանտում. Մարտի վերջերին	73
Թէպէտ վտար քաղքէ քաղաք	74
Հերոսին. Հերոս դու անցար	75
Արամի երգը. Բանտին գոնեք	76
Բարով եկար սիրուն կուռնի	76
Հայրենեաց սիրով վառւած	77
Հայ ապրինք եղբայրք	78
Նպատակիս գէթ մի մասը	79
Ծագեց արև ազատութեան	79
Ողջուն ընդ քեզ Հայաստան	80
Տուր ձեռքդ եղբայր	81
Թշառ հայրենիք	82
Հայոց երկրի ասաղ ու լուսին	83

Զարթիւր սիրտ իմ վշտահար	84
Ախպօր երգը. Ալ ու ալւան եւ հազել	84
Թէ իմ ալիսը հերքս սենային	85
Երգ պանդխտի	87
Էն ամպի նման խուլ սրտումով	87
Անխզճօրէն մեզ գատում են	88
Դուք ինձ ձայն մի տաք	89
Յոյս. Թող փշէ քամին պաղ պաղ երեսիս	89
Տէր էկեց գու զհայս	90
Զարթէք, զարթէք	91
Այն օրը որ ես քեզ տեսայ	92
Լռեց. Ամպերը եկան ծածկեցին	93
Ինչ անենք	94
Հապա քաջագունք	95
Իմ հայրենիք զիս կը կանչէ	95
Երգ մարտի Մնացես բարեաւ	97
Նազէի օրօրը. Քնիր իմ բալիկ	97
Արիք հայկազունք	98
Աշտ Թաթուլի երգը. Ելգըզ քեօշքից	100
Այն մեր սիրտը լիքը զարտ, ցաւ	101
Երբ ալեկոծ ծովի վրայ	101
Տալովորիկի գաւառի եմ դորդ	102
Ահա մայր իմ ես գնում եմ	103
Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ	104
Թէ իմն հայրենեաց քնար սգաւոր	105
Ծովակ. Զայն տուր իմ ծովակ	107
Դեռ բլբուլ մեր աշխարհից	108



20067
20068
20069

CP

Am

Guylot

Am

Actu

2013

Am

Am

Am

Am

Am

9/10/35 - 9/11/35

1/11/35

1/11/35

1/11/35

1/11/35

1/11/35

1/11/35

1/11/35

1/11/35